



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20.508

329.14
7-50

175 JAN 2010

№ 25

« Յ Ա Ռ Ա Ջ »-ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 25

89

Լ. ՊԵՏՐՈՎ

ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ

A. Bedikian
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մուտք. Թարգմ. ԳԱՐ. ՊԱՊՈՎԵԱՆ.

Գինն է 20 կոպ.




1906
Ս. ՊԵՏՐՈՎՈՒՐԳ

372.14
Պ-50 Լ. ՊԵՏՐՈՎ

55 JUL 2013

ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ

Ռուսեր. Թարգմ. ԳԱՐ. ՊԱՊՈՎԵԱՆ.



Ս.-ՊԵՏԵՐԱՌԻՐԳ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ.

1906

20.508

22 JUL 2013

ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ

Ռուսական սօցիալ-դեմոկրատները, իրենց կուսակցական զրականութեան մէջ, ինչպէս և մասնաւոր վիտարանութիւնների ժամանակ առանձին եռանդով ընդգծում են իրենց ծրագրի «գիտականութիւնը» և իրենց զաղափարական հակառակորդների, սօցիալ-յեղափոխականների ծրագրի անգիտականութիւնը և մանր-բուրժուականութիւնը:

Սօցիալ-դեմոկրատները իրենց ծրագիրը հիմնում են Մարկսի և էնգելսի սօցիոլոգիական հայեացքների վրայ: Մարկս-էնգելսեան տեօրիայի համաձայն, ամբողջ հասարակական զարգացումը պայմանաւորւում է նիւթական, արտադրողական ոյժերի զարգացմամբ և, նախնական հասարակութեան տնտեսական հաւասարութեան չքանալու մօմենտից սկսած, երբ երևան են դալիս մասնաւոր սեփականութիւն և տնտեսական հակադիր շահեր ունեցող դասակարգեր—այդ մօմենտից սկսած, հասարակական զարգացումը կատարւում է այդ դասակարգերի կռիւ միջոցով: Նիւթական արտադրողական յարաբերութիւնների ամբողջութիւնը, կամ ուրիշ խօսքով, հասարակութեան տնտեսական ստրուկտուրան, որը միշտ համապատասխանում է իր ժամանակի արտադրողական ոյժերի զարգացման աստիճանին, անմիջապէս և ուղղակի կերպով որոշում է հասարակութեան այս կամ այն դասակարգերի բաժանումը, նրա իրաւական նօրմաները և քաղաքական կարգերը, իսկ միջնորդաբար (посредственно) հասարակական



(ПУШКИНСКАЯ СКОРОПЕЧАТНИЦА) ПЕТУКОВЪ ПЕР. 4.

21873-59

բարբերը, տիրապետող գաղափառները, զգացմունքները և
 ընդհանրապէս նրա ամբողջ հոգեկան կուլտուրան: Մարդ-
 կային հասարակութիւնը իրեն ելակէտ-բջիչ ունենալով փոք-
 րաթիւ, վայրենի-որսորդների, թափառական ցեղը, որը ապ-
 րում էր նախնական կոմմունիզմով, արտադրողական ոյժերի
 զարգացման հետ գուղընթացաբար աճում էր ըստ քա-
 նակի, բարդանում ըստ որակի և անցնելով մի շարք աւելի
 բարդ տնտեսական աստիճաններ, ներկայումս, հին և նոր
 աշխարհների բոլոր քաղաքակիրթ երկրներում, ընդունել է
 կապիտալիզմ-ապրանքային տնտեսութեան վրայ հիմնւած իրա-
 ւական պետութեան ձև: Այդ, ժամանակակից, կարգերի զըլ-
 խաւոր առանձնապատկութիւնները կայանում են հետեւեա-
 լում: Ամբողջ տնտեսութիւնը կառուցւած է մասնաւոր սե-
 փականութեան սկզբունքի և աշխատանքի լայն, հասարա-
 կական բաժանման վրայ: Եթէ ոչ բոլոր արդիւնքները,
 դոնէ նրանց խոշորագոյն մասը արտադրւում է ոչ թէ ար-
 տադրողների անհատական սպառման, այլ շուկայում, իբրև
 ապրանք, փանառելու համար: Բոլոր քաղաքացիները ճանաչ-
 ւում են հաւասար թէ քաղաքացիօրէն և թէ մասամբ էլ
 քաղաքականօրէն. և եթէ հաշւի չառնենք անտեսօրէն աւելի
 ու աւելի թուլացող և քանակութեամբ նւազող ինքնուրոյն
 արհեստաւորների դասակարգը և, նախակապիտալիստական
 շրջանի մնացորդ, մանր զիւղացիներին, մնացած ամբողջ ազ-
 գաբնակութիւնը բաժանւում է երկու անհաւասար դասա-
 կարգերի՝ շահագործուող, սեփանականադուրկ, վարձու բան-
 ւորների մասսայի և շահագործողների, համեմատաբար չնչին
 շերտի, անձնապէս չաշխատող սեփականատէրերի: Արտադրու-
 թեան բոլոր անհրաժեշտ պարագաները, բացի բանւորական
 ոյժից—ինչպէս են հողը, արտադրութեան գործիքները և
 միջոցները պատկանում են սեփականատէրերի դասակարգին:

Միայն վերջինները կարող են, սեփականատիրութեան շնորհիւ,
 կազմակերպել և վարել արտադրութեան գործը, և իսկապէս էլ
 վարում են իբրև ձեռնարկողներ: Բնականաբար, նրանց ձեռ-
 նարկութիւններում արտադրած բոլոր արդիւնքները դառնում
 են նրանց բացառիկ սեփականութիւն: Դուրս գալով եկամտի
 այն մասը, որը ստանում են բանւորները և ծախսւում ար-
 տադրութեան մէջ գործադրած հում նիւթերի, մեքենաների
 և արտադրութեան այլ միջոցների վրայ, սեփականատէր դա-
 սակարգի ձեռքին մնում է զարձեայ չվարձատրւած—յաւե-
 լեալ արդիւնք, որը անաշխատ եկամտի կամ յաւելեալ ար-
 ժէքի զանազան կատեգորեաների ձեռով (ինչպէս են ըէնտան,
 շահը, տոկոսը) բաժանւում է նրանց մէջ. այդ յաւելեալ ար-
 ժէքի քանակը այնքան աւելի մեծ է լինում, որքան բարձր է
 աշխատանքի արդիւնաւետութիւնը և ցածր է աշխատա-
 վարձը: Իսկական արտադրողներին—վարձու բանւորներին—
 ընկնում է արտադրած արդիւնքների միայն մի չնչին մասը,
 որը շատ հազւագիւտ դէպքումն է ապահովում բանւորների
 կեանքը ցրտից և սովամահ լինելուց: Արտադրութեան միակ
 կանոնաւորիչը—ձեռնարկողների, հնարաւոր եղածին չափ, շատ
 շահւելու ձգտումն է և նրանց փոխադարձ մրցութիւնը շու-
 կայում: Ժամանակակից կապիտալիզմ-ապրանքային տնտեսու-
 թեան համար արտադրողական ոյժերի անդադար զարգա-
 ցումը, այսինքն տեխնիկայի կատարելագործումը և արտա-
 դրութեան լայնացումը կամ նրա «կենդրոնացումը» դառ-
 նում է անհրաժեշտութիւն: Շուկայում, իր մրցակիցներին
 շաղախում է միայն նա, ով կարողանում է միւսներից աւելի
 արժան ծախել: Իսկ արտադրութիւնը այնքան աւելի արժան
 է նստում, որքան աւելի մեծ չափով է ձեռնարկողը օգտւում
 հասարակ և բարդ աշխատակցութեամբ, մեքենաներով, հետե-
 ւապէս, որքան աւելի խոշոր է արտադրութիւնը, որքան ա-

ւելի մեծ քանակութեամբ բանւորներ են աշխատում նրա մէջ:

Կապիտալո-ապրանքային տնտեսութեան զարգացման սկզբնական շրջանում, արտադրութեան լայնացման որոշ չափով խոչնդոտ էր հանդիսանում տեղական, ներքին շուկայի սահմանափակութիւնը և արտաքին, գաղութային շուկաների հետ յարաբերութիւն պահպանելու դժուարութիւնը: Իսկ այժմ, երբ ցամաքային և ծովային փոխադրութիւնը չափից դուրս զարգացել և արժանացել է, մրցութեան ասպարէզը դարձել է համաշխարհային շուկան, որը Եւրոպան Սմերիկայի և Ասիայի հետ ու Սֆրիկան Աւստրալիայի հետ կապում է մէկ տնտեսական ամբողջութեան մէջ: Այժմ գործնականօրէն, այս կամ այն ձեւերով լայնացման առաջ ոչ մի խոչնդոտ չկայ կանգնած: Դրանից է բղխում բոլոր կապիտալիստական երկրների արդիւնաբերողների անսահման ձգտումը լայնացնել իրենց արտադրութիւնը, օգտուել շոգիով, էլէկտրականութեամբ և կատարելագործւած մեքենաներով, կենդրոնացնել իրենց ձեռքի տակ վարձու բանւորների աւելի ու աւելի խոշոր մասաներ:

Գիտական սօցիալիզմի տեսութեան համաձայն, կապիտալո-ապրանքային տնտեսութեան համար այնքան բնորոշ արտադրողական ոյժերի այդ աճումը, երևան է հանում նրա խոր, ներքին հակասութիւնները և իր հետ բերում նրա անխուսափելի անկումը և նոր սօցիալիստական կարգեր: Աշխատանքի հասարակական բաժանման և նրա հետ կապւած ապրանքային փոխանակութեան անհրաժեշտութեան շնորհիւ, հասարակութեան իւրաքանչիւր անդամի պահանջներին փոքրի շատէ կանոնաւոր բաւարարութիւն տալը սերտ կերպով կապւած է հասարակութեան միւս բոլոր անդամների կանոնաւոր անսեսական գործունէութիւնից: Սակայն, քանի զեռ

գոյութիւն ունի հողի, արտադրութեան մեքենաների և միջոցների մասնաւոր սեփականութիւնը, այդպիսի կանոնաւոր տնտեսական գործունէութիւնը փաստօրէն անիրականալի է:

Ժամանակակից իւրաքանչիւր մի տնտեսական ձեւարկութիւն ձգտում է բաւարարութիւն տալ ամբողջ հասարակութեան պահանջներին, հետեւապէս՝ արտադրութիւնը, ըստ էութեան, հասարակական է: Միևնոյն ժամանակ, նա գտնւում է անկօնտրոլ կերպով կամ առանձին ձեւարկողների կամ ձեւարկողների խմբակների տրամադրութեան տակ, որոնք և մրցում են միմեանց հետ շուկայի վրայ: Իւրաքանչիւր մի ձեւարկողական Ֆիրմա ղեկավարում է բացառապէս մի ձգտումով — այն է ստանալ հնարաւոր եղածին չափ մեծ շահ, առանց մի բոպէ աչքի առաջ ունենալու հասարակութեան, իբրև ամբողջութեան, շահը: Այդ պատճառով երկրի ամբողջ տնտեսութիւնը ենթարկւում է ոչ թէ հասարակական պահանջների և նրանց բաւարարութիւն տալու միջոցների կանոնաւոր հաշիւին, այլ տարրերային ոյժերի կոչը խաղին, որը արտայայտւում է արդիւնաբերական կեանքի կենդանութեան և ճնշման շրջանների մշտական յաջորդականութեամբ: Ապրանքների համաշխարհային պահանջի քանակը միշտ տատանւում է, նա կախւած է համաշխարհային հացահատիկների, բրնձի, բամբակի և այլ սննդական ու արդիւնաբերական բոյսերի լաւ կամ վատ բերքից, նոր, մետաղի կամ նաւթահանքերի բացելուց, արտադրական նոր միջոցների հնարելուց, նոր առևտրական դաշնագրեր կապելուց և ընդհանրապէս հազարաւոր այլ պատահական պատճառներից, որոնք մինչև անգամ չի կարելի փոքր ի շատէ լիակատար կերպով թւել: Եթէ մինչև անգամ կարելի լինի որոշել այդ, մշտական փոփոխութեան ենթարկւած, պահանջների քանակը, և զիտենանք թէ արտադրողական տիխնիկայի զարգացման

այս ինչ աստիճանում բոլոր ձեռնարկողները միասին ի՞նչքան ապրանք կարող են պատրաստել—այնուամենայնիւ այդ բոլորի գիտենալը չի կարող խանգարել առանձին ձեռնարկողներին չափից դուրս լայնացնել իր արտադրութիւնը, յուսալով իր արժան ապրանքներով ջաղջախել իր հակառակորդներին: Հետեւաբար առաջ կգայ արտադրութեան միւլենուն անխուսափելի անարխիա, որը տանում է դէպի արդիւնաբերութեան պարբերական ճգնաժամերը: Արդիւնաբերութեան կենդանութեան շրջանում, երբ լայնացնում են հին, կամ ձեռք են բերւում նոր շուկաներ, ձեռնարկողները շահի հետեւից ընկած, աւելի ու աւելի լայնացնում են իրենց արտադրութիւնը, դիմելով անվերջ փոխանումութիւնների, պատրաստում են աւելի ու աւելի մեծ քանակութեամբ ապրանքներ և վերջապէս լցնում են շուկան: Ապրանքները, սպառողներ չգրտնելով, մնում են պահեստներում և խանութներում, փչանում, գնեքը, արտադրութեան արժէքից էլ, ցած ընկնում, ձեռնարկողները սնանկանում են, իրենց հետ տանելով և պարտատէրերին. գործարանները և արհեստանոցները փակւում են կամ աշխատում ընդմիջումներով. բանւորները փողոց են շարւում և քաղցած թափառում: Այդ դրութիւնը շարունակւում է մինչև նոր կենդանութեան շրջանը, որին ճակատադրական անհրաժեշտութեամբ հետևում է նոր արդիւնաբերական ճգնաժամ:

Հասարակական արտադրութեան անկանոնութիւնից դուրս, որը անկարելի է վերացնել, քանի գոյութիւն ունի արտադրութեան մեքենաների և միջոցների մասնաւոր սեփականութիւն, կայ, արդիւնաբերական ճգնաժամերի և ուրիշ, ոչ պակաս խորը, պատճառ, որը սերտ կերպով կապւած է բուրժուական տնտեսական կարգերի հէնց հիմունքների հետ: Արդիւնաբերական տեխնիկայի զարգացման հետ միասին,

երբ մեքենաները աւելի ու աւելի են սկսում փոխարինել բանւորների կատարած աշխատանքը, աշխատագուրկների բանակը դառնում է սովորական երեւոյթ, և, առանձնապէս խտանալով արդիւնաբերական ճգնաժամի շրջանում, նա չի չքանում բոլորովին նաև արդիւնաբերութեան ծաղկեալ շրջանում: Ինչ վերաբերում է բանւորների աշխատող բանակին, նրան էլ ընկնում է ազգային տարեկան եկամտի աւելի ու աւելի չնչին մասը եթէ ոչ բացարձակ կերպով վերցրած, զոնէ համեմատաբար: Կապիտալի այն մասը, որը գործադրւում է մեքենաների, գործարանների և արհեստանոցների շինութիւնների, պահեստների, երկաթուղիների, ջրանցքների և այլ վրայ և վերջապէս զետեղւում է պետական ըէնտայի մէջ—կապիտալի այդ մասը հետզհետէ աւելի ու աւելի աճում է համեմատած այն կապիտալի հետ, որը վճարւում է կենդանի աշխատանքի համար. հետևապէս աճում է և կապիտալիստների յաւակնութիւնը ստանալ ազգային եկամտի աւելի ու աւելի խոշոր մասը: Հետևապէս աշխատաւոր մասաների սպառողական կարողութիւնը, արտադրութեան աճման հետ համեմատած, փոքրանում է. մասայական սպառման արդիւնքները աւելի ու աւելի մեծ դժւարութեամբ են սպառւում և արդիւնաբերական երկրների, արտաքին շուկայի համար մրդող կռիւր, աւելի է լարւում և կատալի դառնում, իսկ ճգնաժամերը աւելի մեծ չափեր են ընդունում և դառնում յանախակի երեւոյթ:

Այդպիսով, կապիտալիստ-ապրանքային տնտեսութիւնը, իր զարգացման որոշ աստիճանի վրայ, նրա հետ անխուսափելի կերպով կապւած, արտադրողական անարխիայի շնորհիւ, ճակատադրորէն տանում է դէպի մարդկային ոյժերի և աշխատանքի, անդադար աճող, ապարդիւն սպառումը, և աւելի ու աւելի անապահովութեան և անկայունութեան մատ-

նում ոչ միայն աշխատաւոր մասաների զրուծիւնը, այլ և իրենց, սեփականատէրերի ու կապիտալիստաների մեծագոյն մասի զրուծիւնը, բացառութեամբ ի հարկէ միայն կապիտալի մաղնատնների: Կապիտալիստական տնտեսութիւնը, եթէ արտայայտելու լինինք Մարկսի խօսքերով, այլ ևս անկարող է յաղթահարել այն արտադրողական ոյժերը, որը ծնել է հէնց ինքը: Արտադրողական ոյժերի զրուծիւնը արդէն հակասում է արտադրութեան և փոխանակութեան գոյութիւն ունեցող ձեւերին և սեփականատիրական շարաբերութիւններին: Այդ զրուծիւնից դուրս դալու միայն մի ելք կայ՝ արտադրութիւնը, ըստ հուլիանի, հասարակական լինելով՝ պէտք է հասարակական դառնայ նաև ըստ կազմակերպութեան: Պէտք է վերանայ արտադրութեան մեքենաների և միջոցների մասնաւոր սեփականութիւնը, ամբողջ արտադրողական ապարատը դառնայ կոլլեկտիւ սեփականութիւն և արտադրութիւնը վարել կանոնաւոր կերպով, ամբողջ հասարակութեան կազմակերպւած ոյժերով: Մի խօսքով արտադրութեան կապիտալիստական ձեւը պէտք է վերածւի սօցիալիստականի:

Կապիտալիստական կարգերի զարգացումը ոչ միայն դնում է հասարակութեան առաջ այդ խնդիրը, ոչ միայն, իր վերին աստիճանի զարգացած արդիւնաբերական տեխնիկայով ստեղծում է նրա լուծման համար անհրաժեշտ նիւթական հիմքերը, այլ և ծնում է, յանձին աւելի ու աւելի աճող վարձու բանւորների զստակարգի, այդ սօցիալական յեղաշրջման համար անհրաժեշտ ոյժը:

Երբ տիրում է ընդհանուր մրցութիւն, խոշոր արտադրութիւնը, իր արդիւնքների արժանութեամբ, անխուսափելի կերպով ջախջախում է մանրերին: Արդիւնաբերական ձեռնարկութիւնները անխուսափօրէն կամ փլոււծ կամ աւելի ու աւելի լայնանում. մանր բուրժուազիան քայքայւում և խր-

տացնում է պրօլէտարիատի շարքերը: Որքան աւելի առաջ է գնում այդ պրօցէսը, այնքան աւելի որոշակի կերպով է հասարակութիւնը բաժանւում երկու անհաւասար դասակարգերի՝ խոշոր սեփականատէրերի և կապիտալիստների փոքրամասնութեան և սեփականազուրկ պրօլէտար—բանւորների հսկայական մեծամասնութեան: Բանւորները կամաց-կամաց սկսում են պարզապէս հասկանալ իրենց և կապիտալիստ սեփականատէրերի շահերի անհաշտելի հակասութիւնը. սկսում են հասկանալ, որ անհատական ոյժերով նրանք չեն կարող ձեռք բերել իրենց զրուծեան, թէկուզ մասնակի, բարելաւումը և ոչ մի կերպ չեն կարող ձեռք բերել իսկական մարդավայել գոյութիւն, մինչև որ արժատախիլ չանեն արտադրութեան մեքենաների և միջոցների մասնաւոր սեփականութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս մի քանի ընտրեալներին ապրել առանց աշխատանքի, իսկ ահագին մեծամասնութեան թողնել լիակատար անապահովութեան մէջ: Վարձու բանւորը դուրս է բերում շուկան իր միակ կարողութիւնը—իր բանւորական ձեռքերը և սովորաճ լինելու վրտանդից զրդւած, ստիպւած է վաճառել իր բանւորական ոյժը մի այնպիսի գնով, որը բանւորական լայն մասաների վերաբերմամբ, ցածր է նրանց գոյութեան համար անհրաժեշտ միջոցներից անգամ:

Միմեանցից անջատւած, առանձին առանձին բանւորների մրցութիւնը ամեն քայլափոխում աշխատավարձի այդ քտնակը իջեցնում է միջոցներից էլ ցածր: Միայն այդ մրցութիւնը վերացնելով, գործելով համերաշխ, կազմակերպելով բանւորական միութիւններ և միացեալ ոյժերով մշակելով միութեան բոլոր անդամների համար պարտադիր աշխատավարձի պայմաններ, բանւորները կարող են, բարեխաջող պայմաններում ձեռք բերել աւելի բարձր աշխատավարձ, ա-

ւելի կարճ բանւորական օր, և աշխատանքի աւելի առուղջապահական պայմաններ: Երբ ձեռնարկողները հրաժարուում են այդ պայմանները ընդունելուց, բանւորները հարկադրուած են նրանց ընդունել՝ աշխատանքից հրաժարւելով, գործադուլով: Որպէսզի այդ զէնքը ծառայէ իր իսկական նպատակին, գործադուլին պէտք է միանան այդ պրօֆեսիայում աշխատող եթէ ոչ բոլոր բանւորները, դոնէ նրանց մեծ մասը: Բացի դրանից բանւորները պէտք է ունենան գործադուլի ժամանակ ապրելու միջոցներ: Ահա թէ ինչու այսպէս կոչւած «կրթւած» բանւորները, որոնց աշխատավարձը վաղուց արդէն միջակից էլ բարձր է և որոնց թիւը սահմանափակ է, միայն նրանց է յաջողուում գործադուլի միջոցով պահպանել և երբեմն աւելի ևս բարձրացնել իրենց կեանքի մակերեւոյթը, որը զգալի չափով գերազանցում է գոյութեան անհրաժեշտ միջոցների միխիմումը: Հասարակ բանւորների մնացած մասային, մինչև անգամ յաջող գործադուլը տալիս է միայն ժամանակաւոր բարելաւումներ: Աշխատադուրկների բանակը այնպիսի մեծ ճնշում է գործ զնում բանւորական շուկայի վրայ, որ աշխատավարձը, կարճ ժամանակով բարձրանալով, նորից ընկնում է մինչև իր նախկին քանակը: Այդպիսով, ամբողջ բանւորական դասակարգի և ոչ թէ առանձին աւելի արտօնեալ շերտերի դուրթիւնը բարելաւելու համար, բանւորները անխուսափելի կերպով ձգտում են անմիջական օրէնսդրական մասնակցութիւն ունենալ, յօգուտ իրենց, կազմակերպել քաղաքական բանւորական կուսակցութիւն և հասնել այսպէս կոչւած գործարանական օրէնսդրութեան, այդ բառերի տակ հասկանալով ոչ միայն բանւորական օրի օրէնսդրական նօրմիրովկան, գործարանական ինսպեկցիայի հիմնելը, այլ և բանւորների ապահովադրութիւնը. հիւանդութեան և դժբախտ պատահարներից, աշխատանքի ինվալիդների թոշակը

և այլն: Սակայն ոչ բանւորական միութիւնները, ոչ գործադուլները, ոչ գործարանական օրէնսդրութիւնը, չնայած նրանց համեմատական օգտակարութեան, չեն կարող վերացնել ժամանակակից կապիտալիստական կարգերի հիմնական պահասութիւնները—արտադրութեան անարխիան և արդիւնաբերական եղանակները, սեփականատէրերի անգալար ահող անաշխատ եկամուտը և աշխատաւոր մասաների գոյութեան անապահովութիւնը: Բանւորի կեանքի այն բոլոր բարելաւումները, որոնք հնարաւոր են արտադրութեան մեքենաների և միջոցների մասնաւոր սեփականութեան շրջանում, դրանք բոլորը պալիտաիւ բնաւորութիւն են կրում. այդ պիտակցութիւնը պէտք է աւելի ու աւելի խորը թափանցի բանւորական մասաների մէջ և անխուսափելի կերպով նրանց դարձնէ կոլլեկտիւ սեփականութեան դիտակցական կողմնակիցներ: Ժամանակակից խոշոր արդիւնաբերութեան տեխնիկական պայմանները, հսկայական մեքենաները, շոգու և ելէկտրականութեան գործադրութիւնը, այսպէս ասած, տեխնիկական ապարատի ամբողջ բարդութիւնը և հսկայութիւնը անհնար է դարձնում նրանց անհատական գործավարութիւնը և պահանջում է հարիւրաւոր և հազարաւոր բանւորների աշխատակցութիւն միեւնոյն ձեռնարկութեան մէջ, հետեւապէս և կոլլեկտիւ սեփականութիւն: Այդպիսով ժամանակակից կապիտալ-ապրանքային տնտեսութիւնը ինքն է ներշնչում բանւորներին համերաշխութիւն և ծնում նրանց մէջ, գոյութիւն ունեցող տնտեսական կարգերը նոր, սօցիալիստական հիմունքների վրայ վերակազմելու ձգտումը: Սակայն, երբ մի կողմից կանգնած կլինեն մի բուռն հարուստներ, միւս կողմից միլիոնաւոր գիտակից պրօլետարներ, այն ժամանակ նրանց կուրի հետեւանքը ոչ մի կասկածի չի կարող ենթարկւել: Պրօլետարիատը խաղաղ եանապահզով կամ ոյժի միջո-

ցով իր ձեռքը կառնի կառավարչական ղէկը և ամբողջ հասարակական տնտեսութիւնը կվերաստեղծի իր, պրօլէտարական, շահերի համաձայն:

Մարկսիստական տեօրիայի, իմ վերը արած կարճառոտ պարզաբանութեան ժամանակ ես միայն անցողակի կերպով չիշեցի Մարկսի և նրա հետևողների կարծիքը պարարային շարաբերութիւնների էվօլիւցիայի մասին: Դրա պատճառն այն է, որ մարկսիստների հայեացքը այդ հարցի վերաբերմամբ այն կէս դարու ընթացքում, որը անցել է այդ տեօրիայի երևան դալու օրից, քննադատութեան և կենսական նոր փաստերի ազդեցութեան տակ էական փոփոխութիւնների են ենթարկել: Մարկսի սկզբնական կօնցեպցիայի համաձայն, զիւղատնտեսական էվօլիւցիան ընդհանրապէս շատ քիչ է տարբերում արդիւնաբերական էվօլիւցիայից: Խոշոր հողատիրութիւնը և խոշոր զիւղատնտեսութիւնը իրենց տեխնիկական առաւելութիւնների շնորհիւ պէտք է շաղշախեն մանր զիւղացիական սեփականութիւնը և մանր տնտեսութիւնը:

Ազրարային շարաբերութիւնները Արևմտեան Եւրօպայի բոլոր երկրներում պէտք է մօտենան այն նախատիպին որը ներկայացնում է իրենից Անգլիան, որտեղ զիւղացի սեփականատիրոջ հետքերը մնացել են միայն պատմական ղօհումներում իսկ կեանքի մէջ նրանց փոխարէն առաջ են եկել խոշոր հողատէր—լէնդլօրդը, կապիտալիստ Ֆերմերը և սեփականազուրկ զիւղական բատրակը: Սակայն փաստերը ցոյց տւին, որ զիւղատնտեսական արդիւնաբերութեան մէջ նրա սպեցիֆիկ առանձնաչատկութիւնների շնորհիւ, իրապէս այդպիսի էվօլիւցիայ չի կատարում: Այն երկրներում, որտեղ ինչպէս օր. Փրանսիայում, Իելզիայում, Գերմանիայում, կապիտալօ-ապրանքային տնտեսութեան զարգացման մօժեկտին

պահպանւել էր զիւղացիական սեփականութիւնը, այդ երկրներում զիւղացիները չամառ կերպով կպած են հողին և յաջողութեամբ ծրցում են խոշոր տնտեսութեան հետ: Արևմտեան Եւրօպայի զիւղացին մանր արտադրութեան անշահաւէտութիւնը հաւասարակշռում է սահմանափակելով իր պահանջները, անխոնջ աշխատանքով, աւելի ուշադիր վերաբերմունքով և եթէ կարելի է այսպէս ասել, այն սիրով, որով նա վարում է իր արտեսութիւնը—այսինքն այն բոլոր յատկութիւններով որոնցից անխուսափելի կերպով զուրկ է անազատ բատրակների օգնութեամբ վարւող ամեն մի խոշոր տնտեսութիւն: Գիւղացիներին որոշ չափով օգնեց և Միացեալ Նահանգների ու Կանադայի ծրցութիւնը, որոնք Արևմտեան Եւրօպայի բոլոր շուկաները հեղեղեցին արժան հացով, այդ արժանութիւնը պայմանաւորում էր պարարտ հողերի առատութեամբ և բէնտայի փոքրութեամբ: Մանր զիւղացին իր զբաղմունքների վրայ նայում է բացառապէս իբրև իր գոյութեան միջոցի վրայ: Իսկ խոշոր սեփականատէրը և Ֆերմերը չեն կարող ապրել առանց բէնտայի և շահի: Դրա շնորհիւ մանր զիւղացին կարողանում է դիմանալ երիտասարդ անդրատլանտեան զաղութների ծրցութեան, կարողանում է իր հացը ծախել մի այնպիսի զնով, որը կապիտալիստական տնտեսութեան համար երբէք ձեռնտու չէ: Բացի դորանից մանր զիւղացին խոշոր Ֆերմերից աւելի հեշտութեամբ կարող է հացահատիկներից անցնել բանջարաբուծութեան, թռչնապահութեան և այլ ինտենսիվ կուլտուրային, որտեղ զերակշռող նշանակութիւն ունի խնամքով և ուշադիր վերաբերմունքը և որտեղ անդրովկեանեան ծրցութիւնը միանգամայան թույլ է: Վերջապէս կան տեղեր, թէև շատ քիչ, որտեղ զիւղացիները դիմում են կօօպերացիայի զանազան ձևերին, որը աւելի ևս հեշտացնում է նրա, խոշոր արտադրութեան հետ մղած, կուլի յաղթանակը: Այդ բո-

լոր փաստերը, որոնք յայտնի չէին Մարկսին, ստիպեցին նրա ամենաօրթորոքս հետևողներին մէկին, Կարլ Կաուցկուն, խոստովանել, որ կապիտալը հողագործութեան մէջ չի կարող խաղալ այն ստեղծագործող դէրը, որը պատրաստել է նրա համար պատմութիւնը արդիւնաբերութեան մէջ: Կաուցկու կարծիքով, եթէ մինչև անգամ տեղի ունի գիւղացիութեան պրօլետարիզացիան, յամենայն դէպս այդ պրօցեսը շատ դանդաղ է կատարւում և երբէք չի կարող մինչև վերջը գնալ: Թէև գիւղացին ընկնում է կապիտալի իշխանութեան տակ, ծանրաբեռնելով իր հողը զանազան տեսակի պարտքերով, այնուամենայնիւ ձեռնադրէ նա մնում է սեփականատէր: Եւրօպայի ամբողջ մայր ցամաքի վրայ, գիւղատնտեսական օպերացիաների ժամանակաւոր (сезонный) բնօթի շնորհիւ, որը երբեմն պահանջում է ահադին քանակութեամբ բանւորներ, երբեմն բաւականանում է միայն մի քանի աշխատաւորներով խոշոր անտեսութիւնը, չի կարող վարել միմիայն անհող բարակներին միջոցով: Նրան հարկաւոր է մի կտոր հողին կպած գիւղացի, որը պարբերաբար իր հողի բանւորական ձեռքերը ծառայեցնէր խոշոր անտեսութեան կարիքներին իսկ իր հողի վրայ աշխատելով, վարելով իր սեփական անտեսութիւնը, ստանար գոյութեան միջոցների այն լրացուցիչ քանակը, որը անհրաժեշտ է նրան, գիւղատնտեսութեան մեռած ժամանակամիջոցում, ապրելու համար: Վերջապէս հէնց իրենք, գիւղական բատրակները, որոնք համեմատաբար մանր խմբակներով ցրւած են ահադին տարածութիւնների վրայ, վարձւած են միանգամայն տարբեր պայմաններով, անտուն և անկիրթ, երբէք չեն կարող ներկայացնել այնպիսի համախմբումն և ոյժ, որպիսին ներկայացնում է արդիւնաբերական բանւորութիւնը: Վերջ ի վերջոյ Կաուցկին իր յօդուքը գնում է նախ՝ գիւղատնտեսութեան մէջ աւելի ու աւելի մեծ նշանակութիւն ստացող գիւ-

ղատնտեսական տեխնիկական արտադրութիւնների վրայ (ինչպէս են շաքարագործութեան, գինեգործութեան, կաթնատնտեսութեան և այլն), որոնք ենթարկւում են արդիւնաբերութեան զարգացման ընդհանուր օրէնքներին, և երկրորդ—գիւղից դէպի քաղաքը կատարող անդադար տնող հոսանքի վրայ: Կաուցկու կարծիքով, վերջ ի վերջոյ գիւղացիութիւնը թէ քանակով և թէ տնտեսապէս այնքան կ'թուլանայ, որ կամայ ակամայ կենթարկւի այն յեղաշրջման, որը կկատարի արդիւնաբերական պրօլետարիատը:

Ի՞նչ կօնկրէս դժերով են պատկերացնում իրենց, Մարկսի հետևողները, այն սօցիալական յեղաշրջումը, որը պէտք է կատարէ պրօլետարիատը, երբ նա իր ձեռքը կառնի քաղաքական իշխանութեան դէկր Գանի որ ժամանակակից սօցիալ—դեմօկրատիան պրօլետարիատի զիկտատուրան վաղւան օրւայ խնդիր չի համարում, այդ պատճառով սօցիալ—դեմօկրատիքական կուսակցութիւնների ծրագրում մենք չենք զրտնում մեր դրած հարցի պատասխանը: Բայց և այնպէս գերմանական սօցիալ—դեմօկրատիայի տեսական նշանաւոր ղեկավարներից մէկը, Կարլ Կաուցկին, իր «Սօցիալական հեղաշրջման հետևեալ օրը» գրքով կուժ փորձում է ընդգծել այն կօնկրէս միջոցները, որը պրօլետարիատը, իր դասակարգային շահերից զրգւած և տնտեսական անհրաժեշտութեան ենշման տակ ստիպւած կլինի իրագործել, քաղաքական իշխանութիւնը իր ձեռքը առնելուց յետոյ: Կաուցկու անունը այնքան մեծ հեղինակութիւն է վայելում սօցիալ—դեմօկրատների շրջանում, որ ես աւելորդ չեմ համարում մանրամասնօրէն կանգ առնել նրա հայեացքների վրայ, որոնք հաւանականօրէն դառնալու են ընդհանուր կուսակցական: Նախ և առաջ, ասում է Կաուցկին, պրօլետարիատը իբրև ամենաստորին դասակարգ և հետևապէս անհարկաւոր, կիրականացնէ

21873-59



լիակատար զեմօկրատիզմը: Նա կմացնի ընդհանուր ընտրողական իրաւունք ամեն տեսակի ընտրութիւններում, կապահովէ մամուլի և միութիւնների լիակատար ազատութիւնը, եկեղեցին կանչատէ պետութիւնից, իւրաքանչիւր համայնքին կտայ լիակատար ինքնավարութիւն և կվերացնէ միլիտարիզմը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ պրօլետարիատը կաշխատէ վերացնել այն բոլոր հարկերը, որոնք այժմ ծանրանում են մասայական սպառման արդիւնքների վրայ, և պրօդրեսիվ եկամտային հարկ մտցնելով հարկատուութեան կենթարկի զլիսաւորապէս խոշոր եկամուտները և խոշոր սեփականութիւնները: Վերջապէս պրօլետարիական ըէժիմը կաւելացնի զպրօցների թիւը, լաւ հիմքերի վրայ կդնի զպրօցական գործը և կբարելաւի ուսուցիչների նիւթական գրութիւնը: Իպրօցը, դասակարգային չարաբերութիւնները վերացնելու գործում, կարող է էական աշակցութիւն ցոյց տալ, բոլոր մանուկներին միատեսակ լաւ հագցնելով և կերակրելով միատեսակ կրթութիւն տալով, նրանց բոլորին միատեսակ հնարաւորութիւն տալով բազմակողմանի կերպով զարգացնելու իրենց հոգեկան և ֆիզիքական ընդունակութիւնները: Երկար կանգ չառնելով այդ զուտ զեմօկրատիքական բարեփոխութիւնների վրայ, անցնենք այժմ տնտեսականին: Պրօլետարիատը նախ և առաջ պէտք է վճռի այն հարցը թէ ի՞նչ կերպ բաւարարութիւն տալ աշխատագուրկներին: Կառուցկին իր զրբքօչկի մէջ մատնացօյց չի անում այդ միջոցը, բայց ինչպէս յայտնի է, ամենագործնական միջոցն է—բաւականաչափ նրպաստ աշխատագուրկներին և հասարակական աշխատանքների կազմակերպութիւնը: Յետոյ, պրօլետարիատը չէտ գնելով կամ կօնֆիսկացիայի ենթարկելով, պետական կամ համայնական սեփականութիւն պէտք է դարձնի այն բոլոր ձեռնարկութիւնները, որոնք մենարտութիւն են կազմում կամ բնական

պատճառների շնորհիւ (ինչպէս օր. հանքերը) կամ նրանց կազմակերպութեան ձևի շնորհիւ (տրիօստներ): Կառուցկու կարծիքով, պետական սեփականութեան վերածելու ամենախորմար ձեռնարկութիւնները երկաթուղիներն են, շոգենաւերը, հում նիւթերի և մեքենաների արտադրութիւնները, որովհետեւ խոշոր արտադրութիւնը և կարտելները ամենից աւելի զարգացած են արդիւնաբերական այդ ճիւղերում: Անմնական սպառման արդիւնքների արտադրութեան գործում ինչպէս և մանրավաճառութեան մէջ առաջնակարգ տեղը պատկանում է համայնքներին և ընկերութիւններին իսկ պետական տնտեսութիւնը, պէտք է երկրորդական տեղ քահէ: Ժիշտ այդպէս, պետական կամ մունիցիպալ սեփականութիւն պէտք է դառնան և խոշոր կապիտալիստօրէն կազմակերպւած զիւղատնտեսական ձեռնարկութիւնները և այն հողերը, որոնք նշանակւած են տների և ամեն տեսակ արդիւնաբերական և առւտրական շինութիւնների համար: Ըստ Կառուցկու, մանր զիւղացիական տնտեսութիւնները մնում են մասնաւոր ձեռքերում: Այդպիսով զօյութիւն կունենան սեփականութեան զանազան ձևեր՝ պետական, համայնական, ընկերական և մասնաւոր (մանր զիւղացիութիւնը և արհեստի մի քանի տեսակները): «Կան օր.—ասում է Կառուցկին—այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք չեն կարող զօյութիւն ունենալ տառանց որոշ բիւրօկրատիկ կազմակերպութեան—այդպէս են երկաթուղիները: Այդ գործում զեմօկրատիկ կազմակերպութիւնը կարող է հետեւեալ ձևն ընդունել—բանւորները ընտրում են իրենց միջից պատգամաւորներ, որոնք կազմում են պարլամենտի նման մի բան, և այդ պարլամենտը կանոնաւորում է աշխատանքը և հսկում բիւրօկրատիքական ապարատի գործունէութեան վրայ: Միւս ձեռնարկութիւնները կարելի է յանձնել ամբողջովին բանւորների ձեռքը, երրորդները կաելի է կազմակերպել կօօպերատիւ հիմունքների վրայ: Այդ-

պիսով հնարաւոր են ձեռնարկութիւնների գեծօկրատիկ կազմակերպութեան բազմատեսակ ձևեր. չպէտք է կարծել, որ բոլոր ձեռնարկութիւնները կազմակերպւած կլինեն միևնոյն շարջօնով: Իսկ ի՞նչ միջոցներով կարելի կլինի ստիպել բանւորներին աշխատել պետական, համայնական և այլ ձեռնարկութիւններում: Սովսմահ անելու վտանգով աշխատեցնելու մասին, ի հարկէ, խօսք անգամ չի կարող լինել. տւելի քիչ կարելի է մտածել Ֆիզիքական ոյժի մասին: «Յաղթութիւնը տարած պրօլէտարիատը— ասում է Կառլ Կլին, — երբէք թոյլ չի տայ որևէ տաժանակիր կամ կազարմայական անօրինութիւն»: Պրօլէտարական ըէժիմում, Կառլ Կլին կարծիքով, բանւորական մասսայի գործարաններում, արհեստանոցներում և հանքերում կանոնաւոր աշխատելու զրաւականները հետեւեալներն են՝— նախ աշխատելու սովորութիւնը, երկրորդ— հասարակական կարծիքի ճնշումը և երրորդ՝ աշխատավարձը: Նոր հասարակութեան մէջ, սկզբներում կշարունակեն գոյութիւն ունենալ և՛ փող, և՛ արդիւնքների գները և աշխատավարձը: «Փողը, — ասում է Կառլ Կլին, — արդիւնքների շրջանառութեան, հասարակութեան առանձին անդամների մէջ բաշխման ամենապարզ միջոցն է, այնպիսի բարդ մեխանիզմի մէջ, ինչպէս արտադրութեան ժամանակակից ձևն է, նրան չատուկ աշխատանքի հսկայական բաժանումով: Դա այն միջոցն է, որը հնարաւորութիւն է տալիս հասարակութեան իւրաքանչիւր անդամին իր անհատական հակումների համաձայն բաւարարութիւն տալ իր պահանջներին: Իբրև շրջանառութեան միջոց, նա գոյութիւն կունենայ, մինչև չզտնուի մի այլ, աւելի հեշտ, միջոց: Արդիւնքների գները նշանակելու ժամանակ, նրանց վրայ գործադրած բանւորական ժամանակի քանակը, անպայման խոշոր դէր կխաղայ, և շատ հաւանական է, որ այդ դէպքում աչքի առաջ կառնեն նաև պատ-

մականօրէն հաստատուած գները: Ինչ վերաբերում է աշխատավարձի քանակին, զա վերջնական հաշուում, կ'որոշուի արդիւնքների այն արժեանքանակով, որը գոյութիւն կունենայ բանւորների մէջ բաշխելու համար: Որքան մեծ կլինի արդիւնքների այդ քանակը, այնքան աւելի բարձր կարող է լինել և կլինի աշխատավարձի ընդհանուր քանակը: Քանի որ բանւորները զանազան աշխատանքների կնշանակեն ոչ թէ ըստ դիւրութեան կարգերի— առանց նրանց համաձայնութեան— կարող է պատահել, որ մի տեսակի ձեռնարկութիւններում հաւաքւեն չափից դուրս շատ բանւորներ, իսկ միւսներում անհրաժեշտ թուից էլ պակաս: Այդպիսով խախտուած հաւասարակշռութիւնը վերականգնելու համար կարելի է պակասեցնել աշխատավարձը այն ձեռնարկութիւններում, որտեղ նկատուած է բանւորների չափից դուրս մեծ հոսանք և բարձրացնել այնտեղ, որտեղ պակասում են բանւորները, մինչև որ աշխատանքի ամեն մի ճիւղում հաւաքւեն այնքան բանւորներ, որքան հարկաւոր է: Աշխատավարձի ընդհանուր մակերևութիւնը բարձրացնելու համար անպայման անհրաժեշտ կլինի մեծացնել արտադրութեան չափերը՝ նրանց ներկայ դրութեան հետ համեմատած»: Թէ ինչ միջոցներով կարելի կլինի իրագործել այդ, միևնոյն ժամանակ կրճատելով բանւորական օրը, մանրամասն ես կանգ չեմ առնի և հետաքրքրողներին խորհուրդ կտայի դիմել անմիջապէս Կառլ Կլին զրքօյկին: Կ'ասեմ միայն, որ ամբողջ բանւորական ժողովրդի արտադրողական ընդունակութիւնները կարելի է մեծացնել երկու ճանապարհով— վերացնելով պարագիտական զբաքմունքները, և արտադրութիւնը՝ արդիւնաբերական բարձրագոյն տիպերի մէջ կենդրոնացնելով: Սակայն նոր հասարակութեան առաջ զրած լուծելի խնդիրներից ամենադժւարը ոչ թէ արտադրութեան կազմակերպութիւնն է, այլ արդիւնքների շրջանառութեան կանո-

նաւորումն է արտադրողների և սպառողների մէջ («սպառողներ» խօսքը պէտք է հասկանալ ամենալայն մտքով, ոչ միայն անհատական, այլ և արտադրողական սպառումն):

Պրօլէտարիատը ստիպւած կլինի իւրաքանչիւր հասարակական ձեռնարկութեան մէջ որոշել արտադրութեան քանակը և չափը, հաշւի առնելով թէ՛ արտադրողական ոյժերը (բանւորները և արտադրութեան միջոցները) և թէ՛ արդիւնքների պահանջի մեծութիւնը. նա ոչ միայն պէտք է հողայ, որ իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ լինեն անհրաժեշտ բանւորական ոյժեր, այլ և արտադրութեան միջոցները և որ արդիւնքները վաճառւեն սպառողներին: «Բայց կասեն մեզ, — ասում է Կառլ Մարքսը, — մի՞թէ հնարաւոր է այդ բոլորը իրականացնել ժամանակակից խոշոր պետութեան մէջ: Փորձիր քեզ պատկերացնել որ օրինակ Գերմանիայում պետութիւնը ոչ միայն հսկի ամբողջ երկու միլիօն ձեռնարկութիւնների, այլ և նրանց արդիւնքների շրջանառութեան վրայ, որոնք մասամբ պէտք է տեղափոխւեն մէկ ձեռնարկութիւնից միւսը իբրև արտադրութեան միջոցներ, մասամբ էլ պէտք է ծախւեն 60 միլիօն բազմազան և անկայուն պահանջներ ունեցող, սպառողներին, իբրև սպառման արդիւնքներ: Այդպիսի մի գործ իսկապէս անիրագործելի է թւում, եթէ ի հարկէ չենթադրել, որ բէզլամենտացիայի միջոցով կարելի կլինի բոլոր մարդկանց պահանջները վերածել մի որևէ պարզ շարժի և իւրաքանչիւրին տալ նրան հասանելիք բաժինը, ինչպէս անում են կադարմաներում, այսինքն ուրիշ խօսքով, ժամանակակից քաղաքակրթութիւնը իջեցնել մինչև ամենաստոր աստիճանը: Մի՞թէ ուրեմն «ապագայ պետութիւնը» պէտք է իրենից մի կադարմայ կամ բանտ ներկայացնի: Այնպայման դա այնքան էլ հեշտ չէ: Դա այն ամենազգուար խնդիրներից մէկն է, որը պէտք է լուծի պրօլէտարական բէժիմը: Դրա

համար հարկաւոր է աշխատել, բայց ոչ երբէք չափազանցնել նրա դժւարութիւնը»:

Ամբողջ արտադրութիւնը կարելի է երկու մասի բաժանել՝ արտադրութիւն — սպառման համար և արտադրութիւն — արտադրութեան համար: Արդիւնաբերական միջոցների արտադրութիւնը ներկայացնում է հսկայական ձեռնարկութիւններ, ինչպէս օրինակ՝ երկաթէ արդիւնաբերութիւնը, լեռնային գործը և այլն: Արդիւնաբերութեան այդ ճիւղերը ներկայումս արդէն մշակել են կազմակերպական վերին աստիճանի զարգացած ձևեր, ինչպէս են ձեռնարկողական միութիւններ, կարտելներ, արիօստներ և այլն: Մինչև անգամ արդիւնաբերական այդ միջոցների սպառողների շրջանում ձեռնարկողական միութիւնները չափից դուրս զարգացած են: Այժմ շատ չաճախ առևտրական շարաբերութիւնների մէջ են մտնում ոչ թէ առանձին ձեռնարկողները, այլ ձեռնարկողական միութիւնները, արդիւնաբերութեան մէկ ճիւղը միւս ճիւղի հետ: Այժմ իսկ, երբ այդքան սահմանափակւած է արտադրողների և սպառողների թիւը արդիւնաբերական միջոցների ֆարրիկացիայի գործում, բաւականաչափ կրճատւում է ազատ շուկայի արտադրութիւնը և մեծ չափեր ընդունում արտադրութիւնը բոտ պատւերի: Այդ պատճառով պրօլէտարական բէժիմը արդիւնաբերական այդ շրջանում հեշտութեամբ կարող կլինի մտցնել նախապէս հաշւի արած արտադրութիւն և շրջանառութիւն: Այլ բան է սպառման արդիւնքների արտադրութիւնը. ճիշտ է, այդտեղ էլ մենք տեսնում ենք խոշոր, հսկայական ձեռնարկութիւններ (շաքարի և զարեչրի գործարաններ), բայց ընդհանրապէս վերջրած այդտեղ դերակշռում է մանր արտադրութիւնը: Այդտեղ տիրում է ազատ շուկայի արտադրութիւն, իսկ շուկան, սպառողների բազմամարդութեան շնորհիւ, այնքան էլ

հեշտութեամբ չի կարելի հաշւի առնել, ինչպէս դա հնարաւոր է արդիւնաբերական միջոցների ֆարքիկացիայի գործում: Բայց այդտեղ սպառման անհրաժեշտ արդիւնքների պահանջը ունի որոշ կայունութիւն: Եթէ ներկայ կարգերում այդ պահանջը ենթարկւած է որոշ տատանումների, դա բացատրուում է ոչ թէ ազգարնակութեան պահանջների փոփոխութեամբ, այլ նրա վճառողական կարողութեան տատանմամբ, որը պրոլետարական բէժիմում չի կարող տեղի ունենալ: Սպառման արդիւնքների շրջանառութեան գործում զխաւոր տեղը պէտք է բռնեն կոմունալ հաստատութիւնները և սպառողական ընկերութիւնները: Հատով վաճառումից դուրս, նրանց ձեռքը կանցնեն նաև տեղական պահանջներին բաւարարութիւն տւող սպառման արդիւնքների անմիջական արտադրութիւնը, օրինակ՝ հացագործութիւնը, կաթնեղէն և բանջարեղէն արդիւնքների գործը, բնակարանների կառուցումը: «Այնուամենայնիւ սխալ կլինէր կարծել—ասում է Կառուցիկն—որ այդպիսով կանհետանան բոլոր մասնաւոր մանր ձեռնարկութիւնները: Նրանք կմնան նախ և առաջ գիւղատնտեսութեան մէջ: Ի հարկէ գիւղատնտեսական այն ձեռնարկութիւնները, որոնք այժմ իսկ արդէն դարձել են կապիտալիստական, կքանդւեն, երբ կվերանայ վարձու աշխատանքի սիստեմը, և կ'անցնեն պետութեան, համայնքի կամ ընկերակցութիւնների ձեռքը: Միևնույն ժամանակ այժմեան մանր գիւղացիներից շատերը կթողնեն իրենց տնտեսութիւնը և կմտնեն իբրև բանւորներ խոշոր արդիւնաբերական կամ գիւղատնտեսական ձեռնարկութիւնների մէջ, որոնք և կ'ապահովեն նրա բաւարար գոյութիւնը: Սակայն, այնուամենայնիւ, կգտնւեն գիւղացիներ, որոնք կշարունակեն վարել իրենց մանր տնտեսութիւնը սեփական ընտանիքի, կամ ծախրահեղ դէպքում, նոյնպէս ընտանիքի անդամ համարւող, մէկ բատրակի կամ բատրաչկայի

օգնութեամբ: Մեր գիւղացիութեան ներկայ խաւարամիտ դրութեան մէջ, շատ հաւանական է, որ նրանցից շատերը կցանկան իրենց տնտեսութիւնը վարել հին սիստեմով: Պրոլետարական կառավարութիւնը իր կողմից ոչ մի ցանկութիւն չի ունենայ իր ձեռքն առնել գիւղացիական այդպիսի մանր տնտեսութիւնները: Մինչև այժմ ոչ մի լուրջ սօցիալիստերէք չի պահանջել, որ գիւղացիները էկսպրօպրիացիայի ենթարկւեն կամ թէ չէ նրանց հողերը գրաււեն: Հաւանականօրէն իւրաքանչիւր մանր գիւղացուն իրաւունք կտրւի վարել իր տնտեսութիւնը առաջւայ պէս: Գիւղացին երբէք չպէտք է վախի սօցիալիստական կարգերից: Մինչև անգամ աւելի հաւանական է, որ սօցիալիստական բէժիմի շնորհիւ, այդ գիւղացիական տնտեսութիւնները աւելի ևս ամրանան: Նա կվերացնի միլիտարիզմը, կ'ազատի հարկերից, ինքնավարութիւն կտայ, զպրօցական և հաղորդակցութեան ճանապարհների ծախքերը կզգէ կառավարութեան վրայ, կ'ազատի ազգատներին պահելու ծախքերից և այլն»: Դորանով չի վերջանում դեռ գործը: «Ստեմութիւնը կգերադասի կենդանիները, մեքենաները և պարարտացնող նիւթերը տալ ոչ թէ առանձին գիւղացի-անհատներին, այլ գիւղական համայնքներին և ընկերակցութիւններին: Այդ համայնքները կամ ընկերակցութիւնները իրենց կարգին այդ բոլորը կծախեն ոչ թէ մասնաւոր առևտրական-միջնորդներին, այլ նոյնպէս ընկերութիւններին (սպառողական ընկերութիւններին), համայնական և պետական արդիւնաբերական հիմնարկութիւններին (ջրաղացներին, շաքարի և գարեջրի գործարաններին և այլն): Այդպիսով, այստեղ էլ մանր տնտեսութիւնը կամաց կամաց տեղի կտայ հասարակական տնտեսութեանը, իսկ վերջինը կրկերպարանափոխէ հէնց գիւղական տնտեսութիւնը, մանր ձեռնարկութիւնների ընկերակցական և համայնական միու-

թիւնները վերածելով խոշոր հասարակական ձեռնարկութիւններին: Գիւղացիները կ՛միացնեն իրենց հողերը և կսկսեն մշակել այդ հողը միասին, մանաւանդ երբ կտեսնեն թէ որքան շահաւէտ են գրաւած խոշոր հողերի վրայ, ընկերական սկզբունքներով վարւող անտեսութիւնը: — երբ կտեսնեն, որ այդպիսի անտեսութիւններում, միեւնոյն քանակութեամբ գործադրած աշխատանքը աւելի շատ արդիւնքներ է տալիս և որ բանւորներին աւելի շատ ազատ ժամանակ է մնում քան մանր անտեսութեան մէջ»: Վերջ ի վերջոյ Կառուցկին այսպիսի գոչներով է նկարում նոր սօցիալիստական հասարակութիւնը՝ «Այնտեղ իրար կողքին գոյութիւն կունենան սեփականութեան զանազան ձևեր՝ պետական, կօմունայ, կօօպերատիւ (արտադրողական և սպառողական ընկերութիւնների սեփականութիւնը) և մասնաւոր. ձեռնարկութիւնների կազմակերպական բազմազան ձևեր՝ բիւրօկրատիկ, տրէդ-ունիօնիստական, կօօպիրատիւ և անհատական. աշխատաւորների վարձատրութեան զանազան ձևեր՝ մշտական ռոնիկ, ժամանակաւոր վարձատրութիւն, կտորավոր, մեքենաներից, հում նիւթերից և այլ ստացւած խնայողութիւնները, աւելի ինտեսսիւ աշխատանքից ստացւած օգուտը. արդիւնքների շրջանառութեան ամենատարբեր ձևեր՝ պետական, համայնական և սպառողական ընկերութիւնների խանութների վաճառումը, հէնց արտադրողների վաճառումը և այլն և այլն: Սօցիալիստական հասարակութեան մէջ անտեսական մեխանիզմը նոյնքան բազմակողմանի կարող է լինել, որքան և այժմ, անկարելի կլինի միայն այն հիւանդոտ փութկոտութիւնը, կռիւր և ճրնշումը, որոնք այժմ տեղի ունեն մրցութեան շնորհիւ. կլիբրանայ նաև շահագործողների և շահագործւողների միջի հակադրութիւնը»:

Իսկ որոնք են սօցիալիստական կարգերի իրականանալու

հողերանական զրաւականները: Իրանք են—ինտելիգենտութեան, դիսցիպլինայի և կազմակերպչական ազգանդի զարգացումը բանւորական մասաների մէջ: Կառուցկու կարծիքով, այդ անհրաժեշտ չափով թիւնները այժմ արդէն ստեղծւում են կապիտալիստական հասարակութեան մէջ: «Կապիտալի պատմական դէրը կայանում է հէնց նրանում, որ դիսցիպլինայի է ենթարկում և կազմակերպում է բանւորներին, լայնացնում է նրանց մտաւոր հօրիզոնը արդիւնաբերական գործարանի և ծխական զանգակատնի սահմաններից շատ և շատ հեռու»: «Որպէսզի պրօլէտարիատը ոչ ժ ունենայ տապալելու իր ահռելի հակառակորդներին, նրան հարկաւոր է բարձր ինտելիգենտութիւն, խիստ դիսցիպլինա, պրօլէտարների լայն մասաների նախանձելի կազմակերպութիւն և այդ բոլորը անպայման անհրաժեշտ պէտք է դառնայ ամբողջ անտեսական կեանքի համար: Պրօլէտարիատը միայն այն ժամանակ կչաղթանակէ, երբ այդ բոլոր չափութիւնները նա լիակատար կերպով կզարգացնի իր մէջ, այդ պատճառով էլ նրատիրապետութիւնը, հետեւապէս և սօցիալական չեղափոխութիւնը տեղի կունենայ միայն այն ժամանակ, երբ գոյութիւն կունենան, սօցիալիստական հասարակութեան ոչ միայն տրնտեսական, այլ և հոգեբանական այդ զրաւականները»:

Սրանով ես վերջացնում եմ Մարկսի և նրա հետեւողների հիմնական հաշիւայինների պարզաբանութիւնը: Բաց նախ քան քննադատութեան անցնելը, ի միջի այլոց, նկատեմ, որ Կառուցկու նկարագրած այդ կարգերը հազիւ թէ կարելի լինի անւանել սօցիալիստական: Իսկ աւելի շուտ անցողական շրջանի կարգեր են: Բացի դորանից, հազիւ թէ այդ անցողական կարգերն էլ իրականանան միանգամից, դիկտատուրայով: Իրանց իրականացման համար հարկաւոր է, որ ծնունդ առնեն այն կոլլեկտիւ կազմակերպութիւնները, որոնք իրենց վրայ կվերցնեն

այն ֆունկցիաները, որոնք այժմ կատարուում են անհատական նախածեռնութեամբ: Սպառողական բնկերութիւնները, քաղաքային և գիւղական համայնքները, որոնք իրենց վրայ պէտք է վերցնեն արտադրութեան որոշ ճիւղերը և սպառման կազմակերպութիւնը, վերչապէս արտադրողական կօօպերացիաները, պէտք է խիտ ցանցով ծածկեն ամբողջ երկիրը, նախ քան ըստ պատւերի արտադրութիւնը կփոխարինի շուկայի արտադրութեան: Վերչապէս կառուցիւղ զբքոյկուում մենք չենք զտնուում մի, վերին աստիճանի, էական հարցի պատասխանը— թէ ո՞վ և ի՞նչպէս պէտք է որոշի արդիւնքների գինը, աշխատավարձի քանակը, զանազան հասարակական հիմնարկութիւններուում ծառայողների ռոճիկները: Արդեօք զրանք կ'որոշեն, ինչպէս այժմ, մրցութեամբ, թէ տակսայի կ'ենթարկւեն որոշ հաստատութեան կողմից: Դա մութն է մնում:

Մարկսի տեօրիայի երեւան զայլուց արդէն անցել է կէս զար: Սյգ ժամանակի ընթացքում կեանքը առաջ էր գնում, երեւան եկան նոր փաստեր, առաջ եկաւ ահագին քննադատական գրականութիւն. այդ բոլորը զգալի կերպով տատանեց Մարկսի կառուցած տեսական շէնքը: Նէնց նրա հետեւողների մէջ այժմ հազիւ թէ զտնւին մի քանի մարդիկ, որոնք համաձայն լինէին միմեանց հետ մինչև անգամ հիմնական տեսական հարցերի ըմբռնողութեան և բացատրութեան մէջ: Իմ նպատակը չէ մանրամասն կանգ առնել այդ քննադատութեան հետեւանքների վրայ: Ես կանգ կ'առնեմ միայն ամենաէական և, ճրագրական տարածայնութիւնների հետ սերտ կապ ունեցող, հարցերի վրայ:

Մարկսը, իր ամբողջ տեօրիան հիմնուում է այսպէս կոչւած անտեսական մատերիալիզմի վրայ, որի համաձայն սօցիալական կեանքի բոլոր երևոյթները, հոգեկան կուլտուրան էլ հե-

տր-միայն մէկ մատերիալիստական հիմք ունեն— արտադրողական ոյժերը և արտադրողական շարաբերութիւնները: Մարկսի կարծիքով, մարդկային հասարակութեան զարգացումը կախւած է արտադրողական ոյժերի զարգացումից: Նրա համար իրաւական նօրմաները, քաղաքական կարգերը և ամբողջ հոգեկան կուլտուրան ոչ մի ինքնուրոյն նշանակութիւն չունեն և ներկայացնում են լոկ անտեսական ստրուկտուրայի վերնաշէնքը: Բայց Մարկսը որոշակի չէ ասել, թէ արտադրողական ոյժեր ասելով նա ի՞նչ է հասկանում, և մինչև այժմ արտադրողական ոյժերի հասկացողութիւնը, ամբողջ մարկսիստական գրականութեան մէջ, վերջնականապէս չէ որոշւած: Մի քանիսները այդ տերմինի տակ հասկանում են, զլիաւորապէս արտադրողական տեխնիկայի դրուութիւնը, միւսները— անտեսութեան մատերիալիստական պայմանների ամբողջութիւնը, երրորդները— այդ հասկացողութեան մէջ մտցնում են նաև բնական գիտութիւնների զարգացման աստիճանը, և մինչև անգամ ժողովրդի ցեղական առանձնայատկութիւնները: Սակայն, որպիսի, լայն թէ նեղ դա միւլենոյն է, բովանդակութիւն էլ, չղնենք «արտադրողական ոյժեր» հասկացողութեան մէջ, յամենայն դէպս արտադրողական ոյժերի դրութեան վերայ չի կարելի նայել իբրև, իր սեփական ինքնուրոյն օրէնքներով զարգացող մի տարրական գործօնի վրայ: Դրանք ոչ թէ շարժիչ պատճառներ են, այլ աւելի շուտ երկրի ամբողջ նիւթական և հոգեկան կարողութիւնների գումարն է: Միայն ուսումնասիրելով այն պատմական փաստերի կօնկրեա, ինքնօրինակ զուգադիպութիւնները, որոնք տեղի են ունեցել այս կամ այն երկրում, այս կամ այն ժողովրդի կեանքում, միայն այդ ճանապարհով մենք կարող կլինենք հասկանալ, թէ ինչո՞ւ մի երկիր օր. Անգղիան հսկայական չափերով զարգացրել է իր արտադրողական ոյժերը, իսկ Ճաճկաստանը և

Չինաստանը ամբողջ դարեր շարունակ կանգ են առել: Այդ ժամանակ կարգի որ իրաւական և քաղաքական «վերնաշէնքերը» խաղացել և խաղում են ահագին դէր—մի դէպքում արտադրողական ուժերի զարգացման խոչնդոտ հանդիսանալով, մի այլ դէպքում, բնդհականակր, նպաստելով այդ զարգացման: Ի հարկէ, հասարակութեան տնտեսական կեանքի վերաբերեալ փաստերը ամենից հեշտ են ուսումնասիրութեան տրուում և աւելի քիչ են ենթակա կամայական անհատական մեկնութիւններին: Քանի որ սօցիալական կեանքի բոլոր կողմերը սերտ կերպով կապւած են միմեանց հետ այդ պատճառով է նրա մի կողմի նշգրիտ ուսումնասիրութիւնը ապիս միւս կողմերի հասկանալու բանալին: Սակայն դա դեռ չի նշանակում, որ արտադրողական ուժերի զարգացումը ամբողջ հասարակական զարգացման նախապատճառը—*primam movens* է: Այսպէս օր. դիտնական բնադէտը ամենայն իրաւամբ միայն կենդանու կմաղքի հիման վրայ որոշում է նրա արտաբին տեսքը և կենցաղը, բայց նա չարաչար կոխալէր, եթէ կմախքի այս կամ այն զարգացումը ամբողջ կենդանու զարգացման պատճառը համարէր: Մի խօսքով, տնտեսական մատերիալիզմի բննադատութիւնը այն եղբակացութեան է բերում, որ դա չի կարելի համարել գիտական—հիմնաւորւած սօցիոլոգիական մի տեսութիւն: Նա գիտութեան մէջ կարող է ունենայ իր պատւաւոր տեղը իբրև պատմական ուսումնասիրութեան մեթոդներից մէկը, որը արդէն դրական հետեւանքներ է տւել առանձնապէս ժամանակակից Արևմտեան Եւրօպայի սօցիալական կեանքի ծաղման հարցի վերաբերմամբ: Բոլոր պատմական փաստերը ցոյց են տալի, որ սօցիալական ինչ շրջանումն էլ առաջ չգան սկզբնական փոփոխութիւններ, նրանք միայն այն չափով կարող

են խորանալ և հիմք դտնել, ինչ չափով նրանք վերջ ի վերջոյ բնդգրկում են հասարակական էկօնօմիկայի շրջանը.

Եթէ հասարակութեան զարգացումը չի որոշում արտադրողական ուժերի զարգացման իմմանէնտ օրէնքներով, եթէ հասարակութեան թէ տնտեսական ստրուկտուրայի թէ նրա քաղաքական կարգերի և հոգեկան կեանքի բացատրութիւնը պէտք է փնտրել նրա պատմութեան կօնկրետ փաստերում, այդ դէպքում ոչ մի հիմք չունենք քաղաքակրթութեան այն բոլոր դրական պտուղները, որը ձեռք է բերել հասարակութիւնը որոշ մօմէնտին, վերադրել բացառապէս նրա տնտեսական զարգացման: Ընդունելով հոյններձ այն սօցիալական փաստերի բարդ, ածանցեալ բնոյթը, որոնց ամբողջութիւնը մենք բնդգրկում ենք «արտադրողական ուժերի դրութիւն» տերմինով, այնուամենայնիւ կարելի է նրանց զարգացման մէջ գտնել որոշ, անհրաժեշտ հետեւողականութիւն: Թող պատմական կօնկրետ փաստերի այս կամ այն շղկապումից որևէ հասարակութիւն առաջադիմում է, կամ հարիւրաւոր տարիներ մնում է միւլենոյն դրութեան մէջ կամ մինչև անգամ յետադիմում է— մի թէ այնուամենայնիւ չի կարելի բնդունել, որ նա ինչ չափով առաջադիմում է ստիպողաբար պէտք է որոշ ուղղութեամբ զարգացնի և իր արտադրողական ուժերը և անցնի հասարակական—տնտեսական կեանքի աւելի բարդ ձևերի միանգամայն որոշ և միանգամայն հետեւողական մի ամբողջ շարք: Ի հարկէ, եթէ ամբողջ մարդկութեան վրայ նայելու լինենք իբրև մի ամբողջութեան վերայ, և աչքի առաջ ունենանք այն հետեւողական պրօգրէսիւ տնտեսական ձևերը, որոնց ներկայացուցիչները հերթով հանդիսացել են զանազան ժողովրդներ և երկրներ, այդ դէպքում ամբողջ տնտեսական զարգացումը կարելի է պատկերացնել իբրև տնտեսական ձևերի մի հետեւողական շարք, որի

մէջ վայրենիների նախնական կոծունիստական տնտեսութեանը հետևում է երկրագործական ցեղական համայնքի սպառողական տնտեսութիւնը, յետոյ ստրկական տնտեսութիւնը, ճորտական տնտեսութիւնը, որին, աշխատանքի հասարակական բաժանման զարգանալով և քաղաքի գիւղից անշատելու շնորհիւ, փոխարինել է ապրանքային տնտեսութիւնը և վերջապէս առաջ է եկել ժամանակակից կապիտալիստական քաղաքային տնտեսութիւնը: Սակայն եթէ մենք ուսումնասիրելու լինենք առանձին ժողովրդների և երկրների զարգացումը, մենք կզանք այն եզրակացութեան, որ տնտեսական կենանքի իսկական էփօլիւցիան այդպիսի ուղիղ գծով չի զնացել: Նա, օրգանիզմի էփօլիւցիայի նման, առաջ է գնացել միաժամանակ զանազան ուղղութեամբ:

Հին Արևելեան-ասիական միապետութիւնների կամ ժամանակակից Չինաստանի տնտեսական կարգերի վրայ մի կողմից, միւս կողմից հին յունական հանրապետութիւնների վրայ չի կարելի նայել իբրև միևնոյն ուղղադիժ զարգացման զանազան աստիճանների վրայ. դրանք աւելի շուտ երկու տարբեր տնտեսական տիպեր են, որոնցից իւրաքանչիւրը անցել է իր առանձին էփօլիւցիան: Ճիշտ այդպէս էլ միջնադարեան, աւատական, Եւրօպայի կարգերը չի կարելի համարել չձոճէական կայսրութեան ներքին զարգացման բնական հետևանք, և բացատրել միայն նրանով, որ գերմանական բարբարոս հորդաները զրաւեցին հռոմէական տերրիտօրիան: Մինչև անգոժ ժամանակակից, աւատական Եւրօպայից ծագած, կապիտալիստական երկրները իրենց սօցիալական ստրուկատուրայով, բոլորովին նման չեն միմեանց. նրանցից իւրաքանչիւրը ունի իր առանձնայատկութիւնները. զանազան դասակարգերի թիւը, նրանց տնտեսական ոյժը, քաղաքակրթութիւնը, պետութեան դեմոկրատիզացիայի աստիճանը, և այլն և այլն. այդ

բոլորը զանազան պետութիւններում զանազան մեծութիւններ են և չի կարելի պնդել, որ օրինակ Պրարսիայի, Գերմանիայի կամ Իտալիայի ապագան արդէն նախորոշած է Անգլիայի, իբրև արդիւնաբերական առաջնակարգ երկրի, ժամանակակից դրութեամբ: Իսա առանձնապէս ճիշտ է յետագէմ երկրների վերաբերմամբ, որոնք համեմատաբար ուշ են մտել կապիտալիստական տնտեսութեան շրջանը և միանգամայն այլ պայմաններում, քան այն երկրները, որոնք առաջ են մտել կապիտալիստական ասպարէզ: Երիտասարդ-կապիտալիստական երկրները, օգտւելով իրենց նախորդների օրինակից, ոչ միայն աւելի արագ քայլերով են անցնում կապիտալիստական զարգացման շրջանը, այլ և այդ շարժման մէջ մտցնում են որոշ ինքնօրինակութիւն: Այդպիսի յետամնաց երկիր է ներկայացնում և Ռուսաստանը: Ազգաբնակչութեան նոսրութեան, հողի համեմատական արատութեան, գիւղացիների թւի խոշոր գերակշռութեան, որը որոշ չափով մինչև այժմ պահպանել է այն հայեացքը, թէ ամբողջ հողը պէտք է լինի աշխատաւոր ժողովրդի սեփականութիւն, արդիւնաբերական բանւորութեան սակաւութեան, մեր բուրժուազիայի տնտեսական թուլութեան և պետական կազմի արխայական ձևերի շնորհիւ Ռուսաստանը, Արևմտեան Եւրօպայի հետ համեմատած, ներկայացնում է այնպիսի առանձնայատկութիւններ, որոնք անպայման որոշ ազդեցութիւն պէտք է ունենան և նրա ապագայ զարգացման վրայ: Իսա ոչ թէ սլավեանօֆիլական կամ նարօդնիկական անուրջ է, այլ անխուսափելի դիտական եզրակացութիւն: Իսկ եթէ, ինչպէս շուտով կտեսնենք, միանգամայն լուրջ հիմքեր ունենք կասկածիլու կապիտալիստական տնտեսութեան ստեղծագործական ոյժի մէջ, որը իբր թէ համարեայ աւտօմատիկ կերպով պէտք է հասարակութեանը հասցնի սօցիալիզմին, մի-

Թէ կարելի է հակադիտական համարել սօցիալիստական կուսակցութեան ձգտումը—օգտել իր երկրի առանձնայատկութիւններով, որոշ չափով ինքնօրինակ ճանապարհով մօտեցնելու նրան սօցիալիզմի Թագաւորութեան:

Մարկսի կարծիքով, կապիտալիստական շարաբերութիւնների յետագայ զարգացումը ինքն ըստ ինքեան ստեղծում է ոչ միայն ամբողջ, սօցիալիստական հասարակութեան համար անհրաժեշտ, հասարակական արտադրողական մեխանիզմը, այլ և կրթում է պրօլետարիատը նոր հասարակութեան լիակատար իրաւասու անդամ լինելու համար: Պրօլետարիատին ընկնում է համեմատաբար հեշտ դէր՝ առգորւել դասակարգային գիտակցութեամբ, կաղծակերպւել և հարկաւար մօծենտին, երբ կհնչի հին կարգերի անկման ժամը, քաղել կապիտալիզմի ցանաժ պտուղները և էկսպրօպրիացիայի ենթարկել էկսպրօպրիատօրներին: Իսկ իրապէս, մասնաւոր սեփականութեան և համաշխարհային մրցութեան վրայ հիմնւած ժամանակակից անտեսական կարգերի արմատական կերպարանափոխութիւնը, և ընդհանուր աշխատակցութեան սկզբունքների վրայ հիմնւած կօլլեկտիւ տնտեսութեան վերածելը վերին աստիճանի դժւար, հսկայական մի գործ է, որի համար հազիւ թէ բուական համարւի կապիտալիզմի տւած պատրաստականութիւնը: Ճիշտ է, արտադրութեան կապիտալիստական ձևի ստեղծած տեխնիկական պրօգրէսը ահագին է և ժամանակակից քաղաքակիրթ պետութիւններից իւրաքանչիւրի արտադրողական ոյժերը այնքան մեծ են, որ եթէ նրանք խելացի կերպով գործադրւէին, կարող կլինէին ապահովել հասարակութեան իւրաքանչիւր անդամի անաղքատ և մարդավայել գոյութիւնը: Ճիշտ է և այն, որ կապիտալիզմը բռնութեամբ քաղաքներում, գործարաններում, արհեստանոցներում կենդրոնացնում է բանւորական մասաներ, առաջ է բերում նրանց

մէջ փոխադարձ շփումն և ծնում է բանւորական շարժում— աւելի ոչինչ: Հեշտութեամբ կարելի է նկատել, որ բանւորական ոյժերի ներկայ բաշխումը բոլորովին չէ համապատասխանում հասարակական բացիօնալ տնտեսութեան պահանջներին և ազգարնակութեան որոշ մասին դատապարտելով պարագիտական զբաղմունքների չէ ընտելացնում որևէ արդիւնաւէտ աշխատանքի: Բաւական է միայն լիշել, թէ որպիսի մի մասա անարդիւնաւէտ կերպով կլանւած է սպրանքային և փողային շրջանառութեան ֆունկցիաներով, միլիտարիզմով, ճոխութեան իրեր պատրաստելով և ունեւոր դասակարգերի անհատական ծառայութեամբ: Սակայն դանաք արդիւնաբերական բանւորութեան, այսինքն այն դասակարգին, որին Մարկսի տեօրիայով, պատկանում է ժամանակակից հասարակութեան վերաստեղծողի պրօլիդէնցեալ դէրը: Ի՞նչ պատրաստութիւն ունի նա: Ճիշտ է, ինչպէս քիչ առաջ ասացի, կապիտալիզմի զարգացումը ստեղծում է բանւորական շարժում. բայց եթէ Արևմտեան Եւրօպայի բանւորներին չաջօղել է կրծատել բանւորական օրը, կանանց և անչափահասների աշխատանքի տեղութիւնը, ձեռք են բերել աշխատանքի քիչ թէ շատ առողջապահական պայմաններ, գործադուլների ապատութիւն, միութիւնների իրաւունքը, այդ բոլորը նրանք ձեռք են բերել կապիտալիստների դէմ մղած անեղ կռուով: Այդ բոլոր բարիքները բանւորները ստացել են այնքան աւելի մեծ չափով, որքան աւելի են լայնացել ամբողջ ազգարնակութեան քաղաքացիական և քաղաքական իրաւունքները, որքան աւելի կատարեալ կերպով է իրագործւել հասարակութեան և պետութեան ղեծօկրատիզացիան: Կուրի հետեւանքները երբէք միշտ ուղիղ շարաբերական չեն եղել կապիտալիզմի զարգացման աստիճանին: Այսպէս օրինակ աւստրալիական զաղութները մետրօպօլիայի հետ համեմատած

շատ և շատ առաջ են զնացել բանւորական օրէնսդրութեան մէջ, թէև նրանք, նոյն Անգլիայի հետ համեմատած, իրենց արդիւնաբերական զարգացմամբ շատ և շատ ստոր են կանգնած: Իեմօկրատիայի սկզբունքները— բոլոր քաղաքացիների իրաւական և քաղաքական հաւասարութիւնը, ժողովրդի վեհիշխանութիւնը օրէնսդրական և կառավարչական բոլոր գործերում— այդ բոլորը միանգամայն հակասում են անտեսութեան կապիտալիստական սիստեմին: Եւ եթէ կապիտալիզմը հաշտում է դեմօկրատիկ ձևերի հետ միայն նրա համար, որ մասաների ազիտութեան, նրա անտեսական ճնշւած դրութեան և անկաղձակերպութեան շնորհիւ իրերի վիճակը, այնուամենայնիւ, մնում է կապիտալիստների ձեռքին: Որպէսզի կարելի լինի ժամանակակից հասարակութեան մէջ տեղի ունեցող քաղաքական ազատութեան և դեմօկրատիկ հաստատութիւնների աճումը վերադրել կապիտալիզմին, հարկաւոր է ապացուցանել, որ քաղաքականօրէն առաջադէմ երկրները միևնոյն ժամանակ կանգնած են և արդիւնաբերական շարժման գլուխ: Իբրև օրինակ ձեզ մէկ կողմից աւստրալիական զաղութները, Շվեյցարիան, իսկ միւս կողմից Գերմանիան և և Բելգիան. վերջինները առաջինների հետ համեմատած, արդիւնաբերական զարգացմամբ աւելի բարձր են կանգնած, իսկ քաղաքական կարգերի տեսակէտից աւելի ցածր: Այդ օրինակը ցոյց է տալիս, որ զա այդպէս չէ: Գնանք աւելի հեռու: Չնայած բանւորական շարժման անկասկած յաջողութեան, այնուամենայնիւ, ներկայումս բանւորները համարեա ամեն տեղ կապիտալիզմի շնորհիւ, այնքան անապահով են և աշխատանքի տակ ճնշւած, որ հնարաւորութիւն չունեն, մասաներով վերցրած, մտաւորապէս առաջադիմելու և հոգեկան կուլտուրայի բոլոր բարիքներին հաղորդելու: Եթէ մէկ կողմը թողնենք բանւորական արխաօկրատիան, այն ժա-

մանակ սօցիալիստական կարգերի հաստատման երեք հոգեբանական գրասականներից— գիսցիպլինայից, ինտելիգենտութիւնից և կաղձակերպական տաղանդից— կապիտալիզմը բանւորների մէջ զարգացնում է միայն գիսցիպլինա: Ամենաքաղաքակիրթ երկրներում անգամ, բանւորները դեռ այնքան անպատրաստ են կեանքի նոր ձևերի համար, որ եթէ ինքը Ամենակարող Աստուածը, լիովին նրանց ձեռքը տար քաղաքական իշխանութիւնը, նրանք երբէք չէին կարողանայ կաղձակերպել իսկական կօլլեկտիւ հասարակական անտեսութիւն, որովհետև նրանց մէջ բացակայում է այդպիսի տրնտեսութիւնը վարելու անհրաժեշտ գիտութիւնը և փորձառութիւնը: Եւ իսկապէս, մի՞թէ թէկուզ հաղարաւոր մարդկանց միևնոյն գործարանում կատարած միացեալ աշխատանքը, իբրև մեքենաների հասարակ մասնիկներ, կարող է մարդկանց սովորեցնել վարել վերին աստիճանի բարդ հասարակական տնտեսութիւնը իր ամբողջութեամբ: Այդ բանին չեն սովորեցնում ո՛չ գործադուլները և ոչ էլ միութիւնները: Չէ՞ որ պէտք է կարողանալ բոլոր բանւորական ոյժերը բաժանել արտադրութեան զանազան ճիւղերում այս կամ այն արդիւնքի հասարակական պահանջի նախապէս հաշւի առած քանակի համաձայն. պէտք է կարողանալ արդիւնքների արդարացի զնահատութիւնը տալ և կաղձակերպել միլիոնաւոր ազգաբնակչութեան մէջ արդիւնքների բաշխումը և անել այդ ամենը այնպէս, որ տեղիք չտրւի ոչ մի լուրջ անբաւականութեան և առարկութեան: Մինչդեռ այժմ ոչ միայն աշխատաւոր մասաների ուղեղներում, այլ և սօցիալիստական զբաղանդութեան մէջ, ինչպէս մենք տեսնում ենք Կաուցկու զբքօյկից, միանգամայն մութն է այն հարցը, թէ արդեօք աշխատանքի բոլոր տեսակները, առանց իւրի առաջ ունենալու նրանց սպեցիֆիկ առանձնաչատիւթիւնները, պէտք

է գնահատուեն միատեսակ թէ ոչ: Վերջին դէպքում անհրա-
 ժեշտ է մշակել գնահատութեան միջոցները, որովհետեւ ան-
 կասկած, ամենամեծ անարդարութիւնը կլինէր ղեկավարել
 ժամանակակից բուրժուական հասարակութեան գնահատու-
 թեան նորմաներով, որը ամեն քայլափոխում ամենածանր և
 անդուրեկան աշխատանքը ամենից արժան է գնահատում:
 Առանց այդ հարցի այս կամ այն լուծման անկարելի է թէ-
 կուզ, ընդհանուր զծերով պատկերացնել, թէ ի՞նչ ձևով
 պէտք է կազմակերպել սօցիալիստական հասարակութեան
 մէջ արդիւնքների բաշխումը: Սօցիալիստական գրականու-
 թեան մէջ չեն պարզաբանւած երկու ուրիշ կարևոր հարցեր
 ևս. առաջին—ի՞նչ միջոցներով կարելի է հասնել բանւորա-
 կան ոյժերի բացիօնալ բաշխման (առանձնապէս չբռնաբարե-
 լով բանւորի անձնաւորութիւնը) արդիւնաբերութեան զա-
 նազան ճիւղերի մէջ, այս կամ այն արդիւնքի հասարակա-
 կան պահանջի համաձայն, և երկրորդ—ի՞նչ սկզբունքով լրաց-
 ցնել այն մարդոց պակասը, որոնք անմիջապէս արտադրու-
 թեան մէջ չմասնակցելով, պարապում են կուլտուրական, հա-
 սարակութեան համար անհրաժեշտ գործով, ինչպէս օրի-
 նակ մանկավարժութեամբ, դիտութեամբ, բժշկութեամբ
 կամ փոխադրութեան և բաշխման ֆունկցիաներով: Մի-
 թէ այդ դէպքումն էլ վերջնական լուծումը պէտք է վերա-
 պահել առաջարկի և պահանջի շարաբերութեան:

Ինչ բաւական չէ կազմակերպել տնտեսութիւնը հասա-
 րակութեան ներսում. հարկաւոր է կանոնաւորել և օտար
 երկրների հետ ունեցած փոխանակութիւնը, որովհետեւ այժմ
 քաղաքակիրթ երկրների տնտեսութիւնը ընդունել է համաշ-
 խարհային կերպարանք, և այլևս անկարելի է վերածել
 կղզիացած, մէկ երկրում ամփոփւած տնտեսութեան: Այժմ
 այդ ամենը կանոնաւորուում է շուկայով: Ամեն ինչ կատար-

ւում է տարրերային ոյժերի խաղի օգնութեամբ— ձեռնար-
 կողները սխալւեցին իրենց հաշիւներում, արտադրեցին ոչ
 այն, ինչ հարկաւոր էր և ոչ այն քանակութեամբ, որքան
 կարող է կլանել շուկան, ձեռնարկողները սնանկանում են,
 կորցնում են իրենց ամբողջ կարողութիւնը, բանւորները ա-
 ռանց աշխատանքի են մնում և սովամահ թափառում: Ո՞վ
 է մեղաւոր այդ դէպքում: Անհատական մեղադրեալներ չկան,
 մեղաւոր են ամբողջ, զոյւութիւն ունեցող, կարգերը: Կոլլեկ-
 տիւ, կանոնաւոր տնտեսութեան մէջ, եթէ տեղի ունենայ
 այդպիսի տնտեսական քայքայում, ի հարկէ, մեղաւոր կլինեն
 այն մարդիկ, որոնք ընտրւած են այդ գործը վարելու հա-
 մար: Եւ բանւորների կրթութեան ու զարգացման ներկայ
 աստիճանում, երբ զոյւութիւն չունեն տնտեսական տեղական
 և բայոնական կազմակերպութիւններ, որոնք միջնորդ հան-
 դիսանային կենդրոնական վարչութեան և ժողովրդի մէջ,
 ամբողջ երկրագնդիս վրայ չէք գտնի մի մարդ, մի կուսակ-
 ցութիւն, որը համարժակէր իր վրայ վերցնել կոլլեկտիւ
 տնտեսութեան բաւարար գործավարութիւնը: Այն կարգերը,
 որը նկարագրում է Կաուցկին իր «Սօցիալական չեղա-
 շրջման հետեւեալ օրը» գրքովում, դեռ ևս շատ և շատ հե-
 ու ու են սօցիալիզմի իդէալից, և աւելի շուտ կարելի է ան-
 ւանել անցոյղական, քան սօցիալիստական, շրջանի կարգեր: Սա-
 կայն զերմանական սօցիալ-դեմօկրատները այդ կարգերն
 իսկ չեն համարժակուում ղենել իբրև ձուտակայ նպատակ:
 Այդքան չնչին է կապիտալիզմի տւած պատրաստականու-
 թիւնը:

Եթէ կապիտալիզմը բանւորներին չի տւել սօցիալիս-
 տական կարգերի համար անհրաժեշտ դիտութիւնը և հմտու-
 թիւն, թերևս նա առաջ է բերում նրանց մէջ բուռն ձրգ-
 տումն դէպի այդ կարգերը: Դժբախտաբար, արիւթիւն

պէտք է ունենայ խոստովանելու, որ իրականութիւնը այդ յոյսն էլ չէ արդարացնում: Սօցիալիզմը, իբրև իդէալ, բանւորների ինքնուրոյն մտքի արդիւնք չէ: Նա մշակած է ինտելիգենտ մարդկանց քննադատական մտքով. սօցիալիզմի առաջին կարապետները—Բարեօֆ, Փուրիէ, Օուէն, Սէն-Սիմօնիստները, Լուի-Բլան, Պրուչոն և վերջապէս ինքը Մարկսը, Էնգելսը, Լասալը ոչ թէ բանւորներ էին, այլ ինտելիգենտներ: Սօցիալիզմը, չնայելով անդադար պրօպօզանդայի, դրժւարութեամբ էր մուտք գործում բանւորական մասաների մէջ, և ներկայումս, աշխարհի ամենաարդիւնաբերական երկրներում, ինչպէս օր. Անգղիայում և Միացեալ-Նահանգներում, որտեղ բանւորները մեծ մասամբ կրթւել են ինտելիգենցիայի ազդեցութիւնից անկախ, մինչև այժմ բանւորների ահազին մեծամասնութիւնը չի չարել սօցիալիզմին և տրէդ-ունիօնիզմի գաղափարից հեռու չի գնացել: Փրանսիայում, Գերմանիայում, որտեղ սօցիալիստական կուսակցութիւնները ծագել են բանւորական կուսակցութիւններից առաջ և այժմ ահազին ոչ թէ են ներկայացնում, բանւորները եթէ իրենց ձայները տալիս են սօցիալիստ պատգամաւորներին, դա բացատրւում է ոչ թէ նրանով, որ նրանք կապւած են սօցիալիզմի գաղափարի հետ, այլ որովհետև այդպիսով յոյս ունեն անմիջապէս, թէկուզ մասնակի կերպով, բարելաւել իրենց դրութիւնը:

Մարկսիստները, չափազանցացնելով կապիտալօ-ապրանքային տնտեսութեան ստեղծագործող դէրը միւսնոյն ժամանակ նւազեցնում են բուրժուական հասարակութեան հակադիր ոյժը: Այդ տեսութեան համաձայն, տարրերային պրօյէկտ տանում է դէպի, ազդարնակութեան երկու, թշնամի, քանակով—անհաւասար բանակների բաժանումը—մի բուռն սեփականատէր կապիտալիստների և միլիօնաւոր բանւորու-

նեան: Միջանկեալ, մանր-բուրժուական շերտերը անպայման անկման են մատնւած: Բայց դա—ուսուպեայ է: Որքան էլ արագ չկատարւի արտադրութեան և սեփականութեան կենդրոնացումը, այնուամենայնիւ մի ահազին մասա զբալւած կլինի ապրանքային և փողային փոխանակութեան ֆունկցիաներով. երբէք հողատէրը կամ գործարանատէրը չի կարողանայ իր գործը վարել առանց ծառայողների որոշ քանակութեան, որոնք կամ մասնագիտական—տեխնիկական կրթութիւն ունեն, կամ արտադրութեան մէջ կատարում են կառավարչի կամ հսկողի ֆունկցիաները սկսած գործարանի որևէ դիրեկտօր-ինժիներից մինչև զլլաստենեակի հասարակ ծառայողը: Ունևոր դասակարգերը չեն կարող հրաժարւել նոյնպէս և այն մարդկանցից, որոնք արտադրութեան մէջ ոչ մի դէր չխաղալով, որոշ անհատական ծառայութիւն են մատուցանում նրանց քնտանեկան կեանքում: Իրանք բոլորը—մեծ կամ փոքր չափով—ապրում են ուրիշների արտադրողական աշխատանքի հաշուով, իրենց դիրքը հասարակ բանւորների դրութիւնից աւելի բարձր են համարում, և որպէսզի նրանք անցնեն սօցիալիստական կուսակցութեան կողմը, նրանց ուղեկներում մեծ յեղաշրջում պէտք է կատարւի: Եթէ դրանց թւին աւելացնենք նաև ինտելիգենտ պրօֆէսիաների մարդկանց—իրաւաբաններին, բժիշկներին, մանկավարժներին, դատաւորներին, մամուլի գործիչներին, կենդրոնական և տեղական վարչութիւնների մէջ ծառայող չինովնիկներին մի բանակը, վերջապէս, Մարկսի տեօրիայի համաձայն, նաև ամբողջ գիւղացիութիւնը, դիւղական բատրակներին բացառութեամբ, այն ժամանակ բուրժուական կարգերի կողմը կանգնած կլինեն ոչ պակաս քանակութեամբ ոյժեր, քան արդիւնաբերական պրօյէտարիաաի կողմը: Կապիտալօ-ապրանքային տրնտեսութեան զարգացման հետ միասին ազդարնակութեան այդ

բոլոր շերտերի քանակը, ի բաց առեալ դիւզացիութիւնը, աւելի ու աւելի մեծանում է, և ոչ թէ պակասում: Գիւզացիութեան քանակը թէև պակասում է անցնելով քաղաքները, այնուամենայնիւ առայժմ, զաղութային հողերի առատութեան և համեմատաբար նոսր աղբաբնակութեան շնորհիւ, հին կուլտուրայի երկրները կարողանում են ապրել ներմուծող հացով: Սակայն այդ դրութիւնը երկար չի կարող շարունակել՝ զաղութներումն էլ զարգանում են քաղաքները և լաւ հողերը արդէն զրաււած են: Եթէ մինչև անգամ բուրժուական աշխարհը քանակով էլ պակասի—այնուամենայնիւ նրա կողմն է դարերով սրբազործւած կազմակերպութեան ոյժը և զօրքը: Եւ ինչ թւում է, որ այդտեղ պէտք է փնտոել Արևմտ. Եւրոպայի բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների չեղափոխական ոգու անկման պատճառը: Արևմտեան—Եւրոպական սօցիալիզմը մի կողմը թողնելով դիւզացիութիւնը և սպասելով թէ նա կանհետանայ սօցիալական զարգացման անխուսափելի տարրերային օրէնքների շնորհիւ, այդպիսով նա իրեն դրել է անելանելի դրութեան մէջ: Գիւզացիութիւնը, աւօրիայի հակառակ, բոլորովին չէր էլ մտածում վերանայ երկրի երեսից, նա առաջադէմ կուսակցութիւններից անուշապրութեան մտանւած, ամբողջովին ընկաւ կղերականների և ազրարիաների աղղեցութեան տակ, և լուրջ խոչնդոտ հանդիսացաւ բանւորական կուսակցութեան չետադայ զարգացման: Արևմտեան—Եւրոպական սօցիալիստական կուսակցութիւնները, երբ կորցրին սօցիալական կարգերի մօտալուտ չեղաշրջման հնարաւորութեան հաւատքը և իրենց դէմ կանգնած տեսան դիւզացիութիւնը, վերջ ի վերջոյ այնքան թույլ զբացին իրենց, որ այժմ չեն համարձակւում բացարձակ ոյժով ձգտել մինչև անգամ այնպիսի արձատական բէֆօրմաների, որոնք հնարաւոր են ապրան-

քային փոխանակութեան շրջանում և միևնոյն ժամանակ անհրաժեշտ բանւորական դասակարգին: Եւ ոչ մի տեղ չեղափոխական ոգու անկումը այնքան նկատելի չէ, որքան գերնանական սօցիալ-դեմօկրատիայի մէջ—հաւասարապէս թէ Բերնշէյնական-բէֆօրմատօրներին և թէ անհաշտելի—Բէբէլի և նրա կողմնակիցներին շրջաններում: Որպիսի չեղափոխական ֆրագներ էլ չարտասանւեն պարլամենտում կամ ժողովներում բուրժուական կարգերի առաջիկայ անկման, պրօլէտարական կուսակցութեան անհաշտութեան, պրօլէտարիատի դէրի, իբրև հին հասարակութեան զերեզմանափօրի, մասին և այլն, դրանք բոլորն էլ մնում են ֆրագներ, գործնականապէս ոչ ոքին ոչ մի բան չեն պարտաւորեցնում: Մի թէ կարելի է չեղափոխական անւանել այն կուսակցութիւնը, որը իր կոնգրեսում, ձայների ճնշող մեծամասնութեամբ վճռում է սօցիալիստական պրօպագանդա չմղել զօրքում, որովհետև դրանով կարող են ծանր պատասխանատուութեան տակ ձգել պրօպագանդիստին, կամ այն կուսակցութիւնը, որը տատանւում է այսպիսի մի հարցում—թէ կարելի է ընդհանուր դորժադուլ յայտարարել, եթէ կառավարութիւնը փորձի չեալել ժողովրդից ընդհանուր ձայնատուութեան իրաւունքը *): կամ որը մտածում է, թէ արժէ արդեօք տօնել համաշխարհային պրօլէտարական տօնը, Մայիսի 1-ը, եթէ դա կապւած է պրօլէտարիատի համար դրամական կորստի հետ: Որևէ կուսակցութեան չեղափոխականութիւնը որոշւում է ոչ թէ հեռաւոր ապագայի անուրջներով, այլ նրա մօտակայ նպա-

*) Թէև, Ռուսաստանի վերջին դէպքերի աղղեցութեան տակ, դերմանական սօցիալ դեմօկրատիայի վերաբերմունքը դէպի ընդհանուր գործադուլը աւելի ու աւելի փոխւում է դէպի լաւը, ինչպէս երևում է այդ Իէնայի պարտէյտագում ընդունւած Բէբէլի բեզուլիցիայից:

աակներով և այդ նպատակներին հասնելու միջոցներով— այդ անսակէտից Բերնշտէյնը և Բէքէյը արժեն իրար:

Ինականաբար ինձ հարցնեն, ի՞նչ զրական եղրակացութիւններ են բղխում Մարկսի զօգմայի քննադատութիւնից: Իրան դժւար է պատասխանել: Եթէ արտադրողական ոյժերի զարգացման իմմանենտ օրէնքը, որը անխուսափելի կերպով հասարակութեանը տանում է դէպի սօցիալիստական կարգերը, միայն անհատական հաւատք է և ոչ թէ զիտականօրէն հաստատուած ճշմարտութիւն. եթէ կապիտալիզմի ստեղծագործող դէրը, մինչև անգամ արդիւնաբերութեան մէջ մի կողմ թողնելով երկրագործութիւնը, շատ և շատ կասկածելի է. եթէ, վերջապէս, միայն պրօլէտարիատի ոյժերը բաւական չեն հասարակութիւնը աւելի խելացի և արդար հիմքերի վրայ վերակազմելու համար— պարզ է, որ հարկաւոր է հրաժարել բոլոր յոյսերը բացառապէս հասարակական զարգացման տարրերային ոյժերի և արդիւնաբերական պրօլէտարիատի վրայ զնելուց, ժամանակ է ընդունելու, որ ամբողջ սօցիալական կեանքի խելացի և արդարացի վերակազմութեան այն հսկայական խնդիրը, որը զրւած է մարդկութեան առաջ, կարող է լուծւել միայն բոլոր աշխատաւորների զիտակցական ստեղծագործութեամբ և մասնակցութեամբ— այքի առաջ չունենալով թէ զրանք աշխատում են զործարանում, թէ իրենց մի կտոր հողի վրայ: Գալիք սօցիալիզմի թագաւորութեան հաւատքի չենակէտը ոչ թէ կապիտալիստական կարգերի չետազայ զարգացման կասկածելի օրէնքներն են, այլ զեմօկրատիկ հաստատութիւնների և ինքնավարութեան սկզբունքների զարգացման այն անկասկած փաստերն են, որը մենք տեսնում ենք տեղական և ընդհանուր պետական կեանքում, մասսաների մէջ աւելի ու աւելի անող, մարդկային արժանապատուութեան զգացմունքը և

լուսաւորութեան ձգտումը և վերջապէս տնտեսութեան կօլլեկտիւ ձևեր ստեղծելու զիտակցական փորձերի մի ամբողջ շարքը: Այդ փորձերի թւին են պատկանում և, այսպէս կօլլուած, մունիցիպալ սօցիալիզմը և աշխատաւոր ժողովրդի մէջ առաջ եկած կօօպերացիաները և տնտեսական միութիւնները, մի խօսքով այն բոլոր հաստատութիւնները, որտեղ մրցութեան սկզբունքին փոխարինել է աշխատակցութիւնը և անհատական ղեկավարութեանը— ամբողջ կօլլեկտիվից ընտրած մարդկանց զործավարութիւնը: Միայն այն դպրոցը, որը անցնում է զիւղացին կամ բանւորը՝ մանելով այդպիսի կազմակերպութիւնների մէջ, միայն այդ դպրոցը կարող է պատրաստել նրան այն զալիք կօօպերացիայի համար, որը պէտք է ընդգրկի ամբողջ երկիրը կամ մինչև անգամ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը: Կենդրոնական կառավարութեանը միայն այն ժամանակ կյաջողւի վարել ամբողջ հասարակութեան կօլլեկտիւ տնտեսութիւնը, երբ ամբողջ երկիրը ծածկւած կլինի այդպիսի տեղական և շրջանային տնտեսական բէջնեւրով: Բայց, որպէսզի սօցիալիստական կարգերի իրականացման անհրաժեշտ այդ նախապատրաստական պայմանները կարողանան ազատ և արագ տեմպով զարգանալ, որպէսզի մարդկային հասարակութիւնը կարողանայ հաստատ և վստահ քայլերով դիմել դէպի սօցիալական խողաղութիւնը, անհրաժեշտ է նախ և առաջ ուժեղ հարւածներ հասցնել կապիտալիստական սեփականութեան: Այն ժամանակ միայն, երբ հողը և խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները կզառնան հասարակական սեփականութիւն, թէկուզ ապրանքային փոխանակութեան շրջանում, այն ժամանակ միայն կարելի է չլուսալ մարդկութեան անդադար օրդանական զարգացման վրայ. իսկ քանի որ հասարակական էվօլյուցիան կատարւում է կապիտալիզմի շրջանակներում, մարդկութեան պրօզրէտը

առաջ կերթայ զիզգաղներով և զանդաղ, մասաների հսկայական տանջանքների հետ միասին:

Սխալ են թէ ուղիղ վերը առաջ բերած հայեացքները, դա ուրիշ հարց է, միայն թէ դրանց մէջ հակադիտական ոչինչ չկայ: Այդ հայեացքները հիմնւած են պատմական փաստերի և ժամանակակից իրականութեան վրայ և շղթայւած չեն այնպիսի մետաֆիզիկական սկզբունքներով, ինչպէս են արտադրողական ոյժերի իմմանենա զարգացումը կամ կապիտալիզմի ստեղծադործող ոյժը: Այն սօցիալ-դեմօկրատները, որոնք իրենց հակառակորդներին մեղադրում են անգիտականութեան մէջ, իրենք աւելի մեծ չափով են վարակւած այդ ցաւով:

Բայց նախ քան սօցիալ-դեմօկրատների և սօցիալիստ-յեղափոխականների ընդհանուր հայեացքներից նրանց գործնական ծրագրներին անցնելը, ինձ մնում է մի քանի խօսք ասել մեր ծրագրի իբր թէ մանր-բուրժուականութեան դէմ:

Եթէ ընդունենք, որ իրեն սօցիալիստ կարող է համարել միայն նա, ով ընդունում է Մարկսի դօգման, ի հարկէ սօցիալիստ-յեղափոխականները—սօցիալիստներ չեն. բայց մի՞թէ Մարկսի դօգման ընդունելը կամ չընդունելը կարող է իբրև կրիտերի ծառայել: Սօցիալիզմը երևան է եկել Մարկսից շատ և շատ առաջ, և անկասկած, գոյութիւն կունենայ և այն ժամանակ, երբ Մարկսի տեօրիան կեանքի և գիտութեան մէջ կատարելով իր պրօգրէսիւ, զրգիչ դէրը միայն պատմական հետաքրքրութիւն կներկայացնի: Իսկ եթէ չափել իսկական կրիտերիայով և ճանաչել սօցիալիստ միայն նրան, որը հասարակութեան արդար և խելացի կազմակերպութիւնը անիրականանալի է համարում, մինչև որ արտադրութեան գործիքները և միջոցները կկազմեն մասնաւոր սեփականութիւն, այդ դէպքում, սօցիալիստ-յեղափոխականները

անկասկած համապատասխանում են այդ կրիտերին, իբրև ապացոյց նրանց կուսակցական օրդանի իւրաքանչիւր մի յօդւածը և նրանց հրատարակած ամեն մի զրքոյկը: Մեր վերջնական իդէալը նոյնն է, ինչ որ սօցիալ-դեմօկրատներինը, այն է մի կողմից կոլլեկտիւ, կանոնաւոր հասարակական տնտեսութիւն, միւս կողմից—լիակատար դեմօկրատիա:

Այժմ տեսնենք, թէ այդ երկու կուսակցութիւններից իւրաքանչիւրը ի՞նչ ձօտակայ նպատակներ է դնում և ինչ ոյժերի վրայ է հենւում: Գործնական այդ շրջանում ռուսական սօցիալ-դեմօկրատները աւելի քիչ հաւակնութիւն կարող են ունենալ իրենց ծրագրի զիտականութեան վերաբերմամբ, որովհետև իւրաքանչիւր մի այդպիսի ծրագիր անխուսափելի կերպով կրում է էմպիրիկ բնաւորութիւն և աչքի առաջ պէտք է ունենայ երկրի քաղաքական և տնտեսական առանձնայատկութիւնները:

Եթէ մինչև անգամ եւրօպական սօցիալ-դեմօկրատները արևմտեան-եւրօպական կեանքի ընդհանուր պայմանները այնքան տհաս են համարում, որ չեն կարծում, թէ ձօտակայ ապագայում սօցիալիստական կարգերը կկարողանան իդէալից վերածւել իրականութեան, ի հարկէ, ռուսական սօցիալ-դեմօկրատները, Ռուսաստանի յետամնացութեան շնորհիւ, աւելի քիչ կարող են անուրջել այդ: Նրանք խորապէս հաւատացած են, որ այն ճանապարհը, որով պէտք է դնայ Ռուսաստանը, ընդհանուր գծերով, արդէն նախորոշւած է Արևմտեան Եւրօպայով, որ, հետևապէս, Ռուսաստանի առաջիկայ յեղաշրջումը, ըստ էութեան, պէտք է բուրժուական լինի, այսինքն, այդ յեղաշրջումը կտայ միայն կապիտալիստական տնտեսութեան նօրմալ զարգացումը ապահովող ազատ քաղաքացիական-իրաւական և քաղաքական կարգեր: Միևնոյն ժամանակ, ի հարկէ, պետութեան դեմօկրատիզացիայի աս-

տիճանը կախուած է այն ոչժից, որը ցոյց կտան պրօլէտարիատը և միւս դեմօկրատիկ տարրերը, իսկ տնտեսական շրջանում գուտ-պրօլէտական պահանջներին նախապէս սահման է դրուում—որ դրանք խոչնդոտ չհանդիսանան կապիտալիզմի չետազայ գարգացման: Այդ պատճառով սօցիալ-դեմօկրատները իրենց ծրագրի քաղաքական մասում մտցնում են ոչ միայն գործադուլների, միութիւնների, ժողովների և մամուլի ազատութիւնը, անհատի անձեռնմխելիութիւնը, լայն տեղական և շրջանային ինքնավարութիւն, այլ և դեմօկրատիկ հանրապետութիւն: Իսկ ներկայ ժամանակի անտեսական ծրագիրը պարունակում է իր մէջ մի շարք, բանւորների նիւթական դրութիւնը բարելաւող և կապիտալիզմի դրութեան հետ հաշաւող, միջոցներ—ինչպէս են՝ 8 ժամեայ բանւորական օր, բանւորների գործարանական ամեն անսակ վտանգներից ապահովութեան պարտաւորութիւնը ձեռնարկողների համար, փոքրահասակների և կանանց աշխատանքի սահմանափակումը, բանւորներից ընտրած գործարանական ինսպեկցիա, բանւորների պետական ապահովութիւն ի հաշիւ կապիտալիստների և այլն:

Ինչ վերաբերում է գիւղացիութեանը, թէև սօցիալ-դեմօկրատները նրան համարում են մանր-բուրժուական մի շերտ, որը անպայման կորստի է մատնւած սօցիալական չետազայ գարգացման պրօցէսում, և որի շահերը, ըստ էութեան, միանգամայն հակասում են պրօլէտարիատի շահերին, բայց քանի որ գիւղացիութիւնը Ռուսաստանում գերակշռող մի տարր է և նրա կամքին հակառակ ոչ մի դեմօկրատիկ բարեփոխութիւն չի կարելի մտցնել, ուստի և սօցիալ-դեմօկրատները ստիպւած եղան իրենց ծրագրի մէջ մտցնել այնպիսի պահանջներ, որոնք, նրանց կարծիքով, կարող են գիւղացիու-

թեան համակրանքը դէպի պրօլէտարական կուսակցութիւնը պրաւել:

Առաջին անգամ սօցիալ-դեմօկրատիան ասպարէզ եկաւ այն ազրաբային ծրագրով, որը ընդունեց 1903 թ. կուսակցական երկրորդ ընդհանուր ժողովը և որը պահանջում էր՝ 1. վերացնել չետ զնման (Выкупной) և բահրայի վճառները և այն բոլոր սոււրքերը, որոնք ընկնում են գիւղացիութեան, իրրև հարկատու դասի, վրայ. 2. վերացնել այն բոլոր օրէնքները, որոնք սահմանափակում են գիւղացու իրաւունքները հողերի տնօրինութեան գործում. 3. վերագարծնել գիւղացիներին այն բոլոր դուժարները, որոնք ստացւած են նրանցից իրրև չետ զրնման կամ բահրայի վճառներ. այդ նպատակով գրաւել վանական և եկեղեցական կալւածները, ինչպէս և ուղէլնի, պալատական և կայսերական ընտանիքի անդամներին պատկանող հողերը և առանձին հարկի ենթարկել հողատէր ազնւականների հողերը. այդ ճանապարհով ստացւած փողերը պէտք է կազմեն ժողովրդական ֆօնդ, գիւղական համայնքների կուլտուտուրական և բարեգործական կարիքներին բաւարարութիւն տալու համար. 4. հիմնել գիւղացիական կօմիտէներ, որոնք, շինական հասարակութեան պէտք է վերադարձնեն (էկսպրօպրիացիայի կամ, եթէ հողը անցել է մի քանի ձեռքերի միջով, պետութեան միջոցով չետ գնելով ի հաշիւ խոշոր հողատիրական ազնւականութեան) հողի այն կտորները, որոնք խլւած են գիւղացիներից ճորտութիւնից ազատելու ժամանակ և որոնք կալւածատէրերի ձեռքին գիւղացիներին ծառայազրելու գործիք են դարձել. 5. դատաւորներին իրաւունք տալ պահասեցնելու չափից գուրս բարձր կապալագները և անվաւեր չաչտարարել այն բոլոր պայմանագրերը, որոնք ճորտական բնաւորութիւն են կրում:

Սակայն ազրաբային այդ ծրագիրը երկար պոյութիւն

չունեցաւ: Այդ ծրագիրը, ինչպէս և ընդհանրապէս սօցիալ-
 դեմօկրատների բոլոր ազրարային հաշեացքները, խիստ քննա-
 դատութեան ենթարկեց սօցիալ-դեմօկրատականների կողմից,
 որոնք զեռ 1902 թ. „Рев. Рое.“ № 8 ասպարէզ եկան հողի
 սօցիալիզացիայի ծրագրով: «Կտորների» ծրագիրը քննադա-
 տութեան ենթարկեց և մի քանի սօցիալ-դեմօկրատների
 կողմից, ինչպէս օրինակ Պ. Մասլովը: Բայց, ի հարկէ, այդ
 քննադատութիւնը չէր, որ ստիպեց սօցիալ-դեմօկրատներին
 փոխել իրենց հաշեացքները. դա կեանքն էր, մի շարք դէպ-
 քեր, որոնք վերջին մէկ ու կէս տարւայ ընթացքում յաջոր-
 դում էին իրար հսկայական արագութեամբ: Սօցիալիստ-չե-
 դափօսականների զիւղական պրօպագանդայի յաջողութիւնը,
 զիւղացիական շարժումները, Համառուսական Գիւղացիական
 Միութեան երևան գալը, որի լօղունդն էր—վերացնել հողի
 մասնաւոր սեփականութիւնը և «բոլոր հողը—ամբողջ ժողո-
 վրդին»—այդ բոլորը ստիպեցին մինչև անգամ սահմանադրա-
 կան-դեմօկրատներին ասպարէզ դալ մի այնպիսի ազրարային
 ծրագրով, որը շատ և շատ հեռու էր գնում սօցիալ-դեմօ-
 կրատների կտորներից: Այդպիսով ազրարային պահանջների
 լայնացումը սօցիալ-դեմօկրատների համար դարձաւ անհրա-
 ժեշտութիւն Եւ ահա 1905 թ. սկզբներում կայացած սօ-
 ցիալ-դեմօկրատների (մեծամասնականների) 3-րդ ընդհանուր
 ժողովում մշակեց մէկ ընդլիւցիա, որի մէջ, ի միջի ալլոց,
 սաւած է, թէ սօցիալ-դեմօկրատիան իրեն նպատակ է գնում
 ամենաեռանդուն աջակցութիւն ցոյց տալ զիւղացիների այն
 բոլոր չեղափոխական շարժումներին, որոնք կարող են բա-
 րելաւել նրանց գրութիւնը մինչև իսկ եթէ այդ շարժում-
 ները հանգեն կալւածատիրական, պետական, վանական և
 եկեղեցապատկան հողերի գրաւման: Լէնինը իր «Սօցիալ-
 դեմօկրատիայի երկու տակիկան» զրքոյկում, աւելի ևս

վճռողական կերպով յայտնում է այն կարծիքը, որ Ռու-
 սաստանում անտ'սական և դեմօկրատիկ բարեփոխութիւն-
 ների մակիմումին կարելի է հասնել միայն պրօլետարիատի
 և զիւղացիութեան զիւղատուրայով, որը կիրաւորուի միայն
 այն դէպքում, երբ պրօլետարիատը եռանդուն կերպով պաշա-
 պանի զիւղացիութեան լօղունդը՝ «բոլոր հողը—ամբողջ ժո-
 ղովրդին»:

Նման ընդլիւցիա հանեց և փորքամասնականների կօն-
 ֆերենցիան մի տարօրինակ յաւելումով, թէ այդ ընդլիւցիան
 ոչ թէ ծրագրային, այլ տակտիկական բնաւորութիւն է
 կրում (այսինքն պարզ ասած, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի
 անպատճաճ դեմագոգիական միջոց): Ոչ մէկ, ոչ միւս ընդլիւ-
 ցիան չի պատասխանում ամենահիմնական հարցին, թէ կու-
 սակցութեան կարծիքով, զրաւած հողերը պէտք է բաժանել
 զիւղացիներին և դառնայ նրանց մասնաւոր սեփականութիւն
 և ի՞նչ հիմունքներով պէտք է կատարել այդ բաժանումը,
 թէ այդ բոլոր հողերը պէտք է շառնան պետական կամ մու-
 ճունքներով պէտք է օգտւի այդ հողերով իբրև կապալառու:
 Մինչև այժմ կուսակցութիւնը չի պատասխանել այդ հար-
 ցերին: Այդպիսով ներկայումս սօցիալ-դեմօկրատները չունեն
 բոլորից ընդունւած ազրարային ծրագիր: Կարելի է միայն
 ասել, որ գոյութիւն ունի երեք հոսանք. մի մասը կանգնած
 է այն տեսակէտի վրայ, որ հարկաւոր է զրաւած հողերը
 բաժանել զիւղացիներին իբրև մասնաւոր սեփականութիւն
 (Նազարով), միւս մասը առաջարկում է այն տեղերում, ուր
 զերակշռում է գարգացած կապիտալիստական տնտեսութիւն,
 այդպիսի տեղերում էկսպրօպրիացիայի ենթարկած հողերը
 զնել ինքնավարութեան այս կամ այն դեմօկրատիկ օրգանի
 արամպրութեան տակ այնպիսի պայմաններով, որոնք ապա-

հովեն գիւղատնտեսական բանւորների շահերը, իսկ այն տեղերում, որտեղ գերակշռում է մանր կապալները կամ աշխատավճառի սխտեմը (система отработковъ) — այսինքն մեծ մասամբ—բաժանել հողը իբրև մասնաւոր սեփականութիւն (Начало № 1 Առաջնորդող յօդւածը): Երրորդ մասը պահանջում է գրաւած հողերը տալ շրջանային դեմօկրատիկ կազմակերպութիւնների ձեռքը այն պայմանով, որ ընտանի ծախսի հասարակական կուլտուրական և լուսաւորութեան կարիքների վրայ (Մասլօյ): Մասլօյի առաջարկած ազդարային նախադիժը բաղկացած է հինգ հիմնական կէտերից. 1. վերացնել գիւղացիների և գիւղացիական սեփականութեան ամեն տեսակ դասային սահմանափակումները: «Պարզ է, որ այդ կէտը, ասում է Մասլօյը, իրաւունք է տալիս գիւղացիներին ծախել իրենց բաժին հողը համայնքին կամ կողմնակի մարդկանց»։ 2. վերացնել այն բոլոր տուրքերը, որոնք կապւած են գիւղացիութեան, իբրև առանձին դասի հետ. 3. գրաւել եկեղեցական, վանական և ու գէլի հողերը և յանձնել դեմօկրատիկ կառավարութեան ձեռքը, որպէսզի ազգաբնակչութիւնը հնարաւորութիւն ունենայ խելացի կերպով օգտւելու այդ հողերով: «Բանւորական կուսակցութիւնը չի կարող նախապէս որոշել, թէ ի՞նչ կօնկրէս ձեռով կշահագործի ժողովրդական ներկայացուցչութիւնը այն հողային ֆօնդը, որը կանցնի նրա ձեռքը: Սօցիալ-դեմօկրատիկական կուսակցութեան նպատակն է, կապիտալիստական կարգերի ամեն տեսակ ձեւերում, պահանջել շրջանային դեմօկրատիկ վարչութիւններից պաշտպանել արտադրութեան միջոցներից զրկւած բոլոր աշխատաւոր մասաների, այսինքն արդիւնաբերական և երկրագործական պրօլէտարիատի, շահերը. 4. Ոչնչացնել ամեն տեսակ պայմանագրեր, որոնք հորտական բնաւորութիւն են կրում. 5. Մասնաւոր սեփականատիրական հողերը (խոշոր

հողատիրութիւնը) յանձնել խոշոր, շրջանային ինքնավար կազմակերպութիւններին. «Իրաւման ենթարկելիք հողերի մինիմալ քանակը որոշում է շրջանային ժողովրդական ներկայացուցչութիւնը»: Ինչ վերաբերում է նախկին պետական կամ կալւածատիրական գիւղացիների ձեռքին գտնւած նադէյներին, ինչպէս երևում է վերը չիշւած նախագծերից, ամբողջ սօցիալ-դեմօկրատիան ընդունում է, որ այդ հողերը պէտք է մնան իբրև մասնաւոր սեփականութիւն նրանց ներկայ տէրերի—գիւղացիների ձեռքին:

Այդ բոլոր ծրագրները մէկ խոր և անբառնալի պակասութիւն ունեն, որը կապւած է սօցիալ-դեմօկրատիկական հայեացքների հէնց հիմունքների հետ: Եթէ ենթադրել, որ առաջիկայ յեղափոխութիւնը կհանդի բուրժուական հասարակութեան ազատութեան, և, հետևապէս, ոչ միայն չի վերացնի կապիտալիստական յարաբերութիւնները, այլ ընդհակառակը, ուժեղ զարկ կտայ նրանց զարգացման, ինչպէս կարծում են բոլոր սօցիալ-դեմօկրատները, առանց բացառութեան. այնուհետև, եթէ հաւատայ, որ կապիտալիստական էփօլիցիայի առաջխաղաց ընթացքը անխուսափելի կերպով տանում է դէպի սօցիալիզմը, ջաղջախելով, կամ զոնէ, չափից դուրս թուլացնելով մանր գիւղացիութիւնը—այդ դէպքում պարզ է, որ չի կարելի, առանց իր սեփական համոզմունքների դաւանանկու, կազմել ազդարային մի այնպիսի ծրագիր, որը բաւարարութիւն տար գիւղացիութեանը: Իսկապէս էլ, զբաւման ենթարկելիք հողերի բաժանման երկու առաջին նախագծերը, անպայման պէտք է առաջ բերեն Ռուսաստանում միլլիօնաւոր մանր հողատէրեր, որոնցից, շատ շուտով պէտք է ծնունդ առնի, արևմտեան Եւրօպայի օրինակի նման, հարիւր հազարաւոր ապահով, մանր բուրժուական, գիւղացիութիւնը: Մասլօյը շատ լաւ հասկանում է թէ ինչ

նշանակութիւն կարող է ունենալ սօցիալիստական կուսակցութեան համար, այդ, իսկական, մանր բուրժուական շերտը: Այդ պատճառով ես կրաւականանամ առաջ բերելով միայն նրա խօսքերը: «Նողերի գրաւումը, նայելով թէ նրանք ո՞ւմ ձեռքը կանցնեն, կարող է ունենալ անազին թէ պրօպրիէտէր և թէ ըէակցիօներ նշանակութիւն: Փրանսիայում, շնորհիւ այն հանգամանքի, որ չեղափոխութեան զրաւած հողերը անցան մանր բուրժուազիայի ձեռքը, իբրև սեփականութիւն, այդ հանգամանքը մանր բուրժուազիայից ստեղծեց բօնօպարտիզմի և բուրժուական «կարգի» բազմաթիւ կողմնակիցների ըէակցիօներ գունդեր: Նողերի բաժանումը կամ վաճառումը կարող է միայն տասնեակ հազար կալւածատէրերի փոխարէն ստեղծել հարիւր հազարաւոր նոր թխւած աւելի մանր կալւածատէրեր, որը, ի հարկէ, ձեռնտու է ըէակցիային»: Բացի այն, որ բաժանման նախադէրը ըստ էութեան չեն համապատասխանում սօցիալիստական կուսակցութեան նպատակներին, այդ նախադէրը կարող են համակրութիւն գտնել զիւղացիութեան ամենաթանկազին շերտերի—աշխատաւոր զիւղացիութեան և զիւղական պրօլէտարիատի կողմից, միայն այն դէպքում, ի հարկէ, եթէ սօցիալ-դեմօկրատները լրութեամբ անցնեն այն, նրանց համար սպասելիք հետեանքները, որը անխուսափելի կերպով պէտք է բերի զիւղացիական սեփականութեան ինստիտուտը: Գիւղացիութեան մեծ մասը անկարող կլինի պահել իր ձեռքում նազէլները և կգրկի նրանցից յօգուտ զիւղական բուրժուազիայի: Հազիւ թէ մի այդպիսի պերսպեկտիւա կարողանայ ժպտալ զիւղացիութեան:

Մասլօվի ծրագիրը— պետական և զրաւած պետական հողերի մօլենիցիպալիզացիան—աւելի մեծ պակասութիւններ ունի և ներկայացնում է մի տարօրինակ կիսամիջոց: Նախ

և առաջ նախկին կալւածատիրական և պետական, իսկ այժմ զիւղացիական նազէլները դառնում են նրանց մասնաւոր սեփականութիւն, հետեապէս նրա նախազիծը չի վերացնում հարիւր-հազարաւոր զիւղական բուրժուազիայի առաջ դալու անխուսափելիութիւնը: Երկրորդ — այն զիւղացիութիւնը, որը կգրաւի բոլոր հողերը, ոչ մի դէպքում թօյլ չի տայ, որ շրջանային կազմակերպութիւնները այդ հողերը կապալով տան առանձին ունեւոր անհատներին — նրանք, առնւազն, կպահանջեն հաւասարիչ (уравниТЕЛЬНЫЙ) կապալ: Բայց եթէ զիւղացիները չհամոզեն, որ բոլոր աշխատաւորների, նրանց թուում և զիւղացիութեան, բնդհանուր շահերի համար, հողը պէտք է դառնայ ժողովրդական սեփականութիւն, այդ դէպքում նրանք աւելի շուտ բոլոր զրաւած հողերը կբաժանեն իրենց մէջ, և ոչ ոք չի կարողանայ զիմադրել նրանց: Յամենայն դէպս, ամենից քիչ կարող են խանդարել այդ սօցիալ-դեմօկրատների պատճառաբանութիւնները, որոնք նազէլի հողերի վերաբերմամբ պաշտպանում են մասնաւոր սեփականութեան սկզբունքը, իսկ իբր հարց է դալի ժողովրդի զրաւած հողերին, մերժում են այդ սկզբունքը:

Անցնենք այժմ սօցիալիստ-չեղափոխականների ծրագրին Սօցիալիստ չեղափոխականները չեն բնդունում արգիւնաբերական բանւորութեան և աշխատաւոր զիւղացիութեան շահերի հակադրութիւնը, ոչ ներկայ մօմենտում և ոչ էլ ապագայում: Նրանք, իբրև մի կուսակցութիւն, հենւում են Ռուսաստանի ամբողջ աշխատաւոր ժողովրդի և սօցիալիստական ինտելիգենցիայի վրայ: Որպէսզի աւելի լաւ պարզել սօցիալիստ-չեղափոխականների հայեացքները, նրանց ծրագրի այդ հիմնական կէտի վերաբերմամբ, անհրաժեշտ է մի փոքր մանրամասն կանգ առնել մարկսիստական դասակարգային կուլտուրիայի վրայ: Ժամանակակից բուրժուական հասարակու-

Թեան մէջ Մարկսը տեսնում է երկու խիստ որոշ և իրենց սկզբունքներով թշնամի դասակարգեր — սեփականատէրերի դասակարգ, որը ապրում է ուրիշի աշխատանքով, իբ սեփականութեան եկամուտով, և պրօլէտարիատ — չունեւորների, իրենց բանւորական ոյժը ծախելով ապրող, վարձու բանւորների դասակարգ: Այդ երկու դասակարգերի շահերը անհաշտելի են՝ առաջինները ցանկանում են անմահացնել հողի, արտադրութեան մեքենաների և միջոցների սեփականութեան իրաւունքը, աչսինքն աչնպիսի կարգեր, որոնք հնարաւորութիւն են տալիս նրանց առանց աշխատելու ապրել, երկրորդները, եթէ ոչ ներկայ մօմենտում, զոնէ ապագայում, երբ կպարզւի և կլայնանայ նրանց դասակարգաչին ինքնազիտակցութիւնը, պէտք է ցանկան ոչ միայն վերացնել վարձու աշխատանքը, այլ և արտադրութեան անարխիային — աչսինքն արտադրութեան բոլոր գործիքների և միջոցների կօլլեկտիւ սեփականութեան և հասարակական տնտեսութեան կանոնաւոր գործավարութեան: Ի՞նչ դիրք ունի բռնած մեր աշխատաւոր զիւղացիութիւնը, այդ երկու հիմնական դասակարգերի մէջ: Նախ քան այդ հարցին պատասխանելը, նկատեմ, որ ժամանակակից հասարակութեան աչգպիսի — սեփականատէրերի և պրօլէտարների — բաժանելը միանգամայն, աչսպէս ասած, կոպիտ բաժանումն է, որը ընդգրկում է միայն ամենախիստ ներհակութիւնները: Այդ երկու դասակարգերը նախ և առաջ ներկայացնում են հէնց իրենց մէջ որոշ զիֆերենցիացիայ, և երկրորդ — չեն ընդգրկում ամբողջ հասարակութիւնը: Օրինակ, սեփականատէրերի մէջ մենք տեսնում ենք հողաչին սեփականատէրեր և, բառիս բուն մտքով, բուժուազիա — աչսինքն արդիւնաբերական, փողաչին և առւտրական կապիտալի ներկայացուցիչներ: Հողաչին սեփականատէրերի շահերը, որոնք իրենց եկամուտը, աչսպէս

կոչւած ըհնտան, ստանում են իրենց հողի սեփականատիրական իրաւունքից, հակասում են ոչ միայն բանւորների, այլ և ամբողջ բուրժուազիայի շահերին: Ետերի աչգ հակադրութիւնը արդէն պարզ և որոշակի կերպով ցոյց է տւել Դաւիդ Բիկարդօն: Մենք մեր զրականութեան մէջ ունենք աչգ հարցի վերաբերեալ Ձերնիշուսիւ զրւածքները, իսկ նորագոյն ժամանակներում Գենրի Ջօրջի զրւածքները, որը, միակողմանի կերպով, մասսաների աղքատութեան պատճառը տեսնում է ըհնտաչի զօյւլթեն մէջ, իսկ սօցիալական հարցի լուծումը նրանում, որ, հարկի միջոցով վերացնել ըհնտան: Անզղիաչի անցեալ դարի առաջին կէսի ամբողջ պատմութիւնը լիքն է հողաչին սեփականատէրերի և ինդուստրիաչի ներկայացուցիչների պայքառով հացի մաքսեր վերացնելու համար: Նոյնանման կռիւ, թէև ոչ աչնքան խիստ ձևով, ինչպէս Անզղիայում, մղւում է աչժմ և Արլւմտեան Եւրօպաչի բոլոր երկրներում: Հողաչին սեփականատէրերին ձեռնտու է հացի թանդութիւնը, որը կբարձրացնի հողագործութեան եկամուտը, հողի զինը, հետևապէս և ըհնտան. նրանք պահանջում են օտար երկրներից ներմուծող զիւղատնտեսական արդիւնքները ենթարկել պահպանողական մաքսի: Արդիւնաբերողներին, ընդհակառակը, ձեռնտու է արժան հաց, որը կպակասեցնի բանւորական ոյժի արժէքը և կբարձրացնի շահի աչն քանակը, որը ընկնում է նրանց: Ետերի նոչնպիսի ներհակութիւն, թէև, ի հարկէ, ոչ աչնքան խիստ, ինչպէս ըհնտաչի և շահի մէջ, կա մի կողմից արդիւնաբերական կապիտալի և միւս կողմից առւտրական և հողաչին կապիտալների մէջ: Փողաչին և առւտրական կապիտալը, կանգնելով արտադրողների և սպառողների մէջ, իւրացնում է և հասարական արտադրութեան պրօցէսում ստացւող յաւելեալ արժէքի առիւծաբաժինը. աչգ է պատճառը, որ ձեռնարկողները ձգտում են զառնալ շուկաչի

անմիջական տիրապէսները թէ՛ հուժմ նիւթերի գնման և թէ՛ պատրաստի արդիւնքները վաճառելու գործում— արդիւնաբերական սինդիկատները, տրեստներ և այլն: Վերջապէս, միևնոյն սօցիալական գրուպայի մէջ մտնող բուրժուազիայի առանձին ներկայացուցիչների մէջ գոյութիւն ունի, երբեմն ամենակատաղի, մրցումն:

Արևմտեան Եւրոպայում համարեա ամեն տեղ մանր բուրժուազիան ընդդիմադիր դիրք ունի բռնած դէպի խոշորը: Այնուամենայնիւ և՛ հողային սէփականատէրերը և բուրժուազիայի բոլոր շերտերը ներկայացնում են մի կօմպակտ մասսային չափով, ինչ չափով հարցը վերաբերում է նրանց արտօնեալ գրութեան պահպանութեան— իրենց սեփականութեան եկամուտներով և ուրիշի աշխատանքի հաշուով ապրելու հնարաւորութեան:

Անցնենք այժմ հասարակութեան միւս հիմնական դասակարգին— պրօլէտարիատին: Մարկսի տեսօրիայի ոգու համաձայն, պրօլէտարիատ առկայով պէտք է հասկանալ վարձու բանւորներ, որոնք ստեղծում են չաւէյեալ արժէք, և որոնց հաշուով ապրում են հասարակութեան չաշխատող անդամների ամեն տեսակ կատեգորիաները: Դա ոչ թէ միայն շահագործող, այլ և չաւէյեալ արժէքը ստեղծող դասակարգն է: Այդ դասակարգի սահմաններում իսկ, մենք տեսնում ենք նրա բաղկացուցիչ զանազան խմբակների շահերի ներհակութիւն: Այսպէս օր. Անգղիայում կրթւած և հմուտ բանւորները, որոնք ուժեղ միութիւններ են կազմում, երկար ժամանակ փորձում էին պահպանել իրենց բարձր աշխատավարձը ամեն տեսակ խոչնդոտներ հանելով նոր, անփորձ բանւորների հոսանքի դէմ, սահմանափակելով աշակերտների թիւը, երկարացնելով աշակերտութեան ժամանակամիջոցը կամ պահանջելով աշխատանք տալ միայն միութիւնների անդամներին.

չպէտք է մոռանալ, որ շատ և շատ միութիւններում բարձր անդամավճառները սովորական բանւորների համար անհնար են դարձնում այդ միութիւնների մէջ մտնելը: Կրթւած և անկիրթ բանւորների թշնամութիւնը երբեմն այն աստիճանի է հասնում, որ կրթւած բանւորների օգնական, հասարակ բանւորները, ստիպած են լինում գործադուլ չաչտարարել իրենց արտօնեալ ընկերների դէմ, ինչպէս այդ եղաւ Անգղիայում նաւաշինարարական միութեան մէջ: Ամերիկայի Միացեալ Նահանգներում և Աւստրալիական գաղութներում բանւորները համարեա բոլորովին արգելեցին հապօնացի և չինացի բանւորների հոսանքը, որոնք, իրենց մրցութեամբ, պակասեցնում էին տեղական բանւորների աշխատավարձը: Միացեալ Նահանգներում վերջին ժամանակներս մի քանի միջոցներ են ձեռք առնւած խանդարելու նաև Եւրոպայի աւելի քիչ քաղաքակիրթ, երկրներից եկող բանւորական հոսանքը: Այնուամենայնիւ, չնայելով այդ բոլոր փաստերին, որոնք ցոյց են տալիս, որ արդիւնաբերական բանւորութեան զանազան շերտերի մէջ գոյութիւն ունի որոշ շփումն, որը անխուսափելի է, ժամանակակից, համաշխարհային և համամարդկային մրցութեան սկզբունքի վրայ կառուցած, բուրժուական հասարակութեան մէջ, այնուամենայնիւ կապիտալի և սեփականատիրական արտօնութիւնների դէմ մղւած կռոււմ վարձու բանւորները, իրենց հասարակական գրութեան համաձայն, պէտք է աւելի ու աւելի համերաշխութեան դան: Սակայն ժամանակակից հասարակութեան մէջ վարձու աշխատանքի գործադրութիւնը չի սահմանափակուում արտադրողական վարձու բանւորներով: Վարձու մարդկանց մի ահազին մասսա, արտադրութիւնից դուրս, զբաղւած է առևտրական և փողային կապիտալների օպերացիաներով, ապրում է անհատական ծառայութիւններով, այսպէս կոչւած «ազատ»

պրօֆեսիաներով, կատարում է, նոյնպէս վարձով, հասարակական և պետական մի շարք ծառայութիւններ, վերջապէս աշխատում է արտադրութեան մէջ, բայց ոչ թէ իբրև բանւոր, այլ իբրև ծառայող: Կապիտալ-ապրանքային անտեսութեան զարգացմամբ այդ խմբակները կազմող մարդկանց թիւը ոչ թէ պակասում, այլ, ընդհակառակը, աւելանում է, որովհետև աշխատանքի արդիւնաւէտութեան անելով, իւրաքանչիւր մի արտադրողական բանւոր, կարող է աւելի մեծ քանակութեամբ հասարակութեան ոչ արտադրողական անդամներ պահել, իսկ կեանքի բարդանալով—այդպիսի մարդկանց աւելի ու աւելի մեծ պահանջ է գրաջուած: Եթէ «պրօլէտարիատ» աէրմինը վերաբերում է միայն արտադրողական բանւորներին, այդ ղէպքում, ինչպէս ես վերը ցուց աւել, Մարկսի այն թէկիսը, որ հասարակութիւնը աւելի ու աւելի բաժանում է փոքրաթիւ բուրժուազիայի և բազմամիլիօն պրօլէտարիատի, այդ թէկիսը չի համապատասխանում իրական փաստերին: Իսկ եթէ արտադրութեան մէջ մասնակցելու պարտաւորութիւնը չհամարենք իբրև «պրօլէտարիատ» հասկացողութեան անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, և աչքի առաջ ունենանք միայն, թէկուզ ոչ արտադրողական, աշխատանքի վարձատրութեան քանակը, այսինքն պրօլէտարներ համարենք վերոյիշեալ կատեգորիաներին պատկանող մարդկանց այն մեծագոյն մասը, որը ստանում է կրթւած բանւորների միջին վարձատրութիւնից ոչ բարձր վարձատրութիւն, այդ ղէպքում ի՞նչ հիմք ունենք կարծելու, որ այդ մարդիկ աւելի սօցիալիստական տրամադրութիւն ունեն, քան աշխատաւոր զիւղացիութիւնը. մի՞թէ միայն այն հանգամանքը, որ գործակատարները, երկաթուղու ծառայողները կամ ծառաները երբեմն երբեմն գործադուլ են անում իրենց դրութիւնը բարելաւելու համար: Բայց չէ՞ որ նոյնպիսի

գործադուլներ են անում և ոստիկանները, մինչև անգամ ուսական ոստիկանները և ստրաժնիկները. մի՞թէ կարելի է կարծել, որ նրանք հակւած են ղէպի սօցիալիզմը: Սօցիալիստ չեղափոխականների կարծիքով, այն զիւղացիները, որոնք ապրում են իրենց աշխատանքով, առանց դիմելու կողմնակի, վարձու աշխատանքի, և որոնց, ընդհակառակը, անխիղճ կերպով շահագործում է թէ կառավարութիւնը՝ իբրև հարկատու դասի, թէ խոշոր հողատէրը՝ իբրև կապալառուի և զիւղական բանւորի, թէ առևտրական կապիտալը՝ իբրև հացահատիկներ վաճառողի, և մեծ մասամբ, իբրև գնողի, այդ զիւղացիները իրենց հասարակական դրութեամբ պէտք է անցնեն ոչ թէ կապիտալի, այլ աշխատանքի կողմը: Աշխատաւոր զիւղացիութեան համար հողը ոչ թէ անաշխատ եկամտի աղբիւր է, այլ իր սեփական աշխատանքը գործադրելու մի միջոց: Ինչպէս որ արդիւնաբերական բանւորները ցանկանում են գուրս գալ վատ վարձատրող վարձկանների դրութիւնից և ձեռք բերել ինքնուրոյնութիւն և անկախութիւն, ճիշտ այդպէս էլ աշխատաւոր զիւղացիութիւնը ցանկանում է պահպանել իր տնտեսական անկախութիւնը վարձկան աշխատաւոր չզառնալու համար: Ի հարկէ, որոշ տարբերութիւն կայ զիւղացիների և խոշոր արդիւնաբերական բանւորների դրութեան մէջ. զիւղացիները, զոնէ ներկայ մօժեշտում, անուրջում են տնտեսական անկախութիւն, իր անհատական տրնտեսութեան սահմաններում. իսկ խոշոր ինդուստրիայի բանւորները կարող են անուրջել միայն կօլլեկտիւ սեփականութիւն: Բայց այդ ղէպքում զիւղացիութիւնը պէտք է հակադրել ոչ թէ ընդհանրապէս արդիւնաբերական պրօլէտարիատին, այլ միայն խոշոր ինդուստրիայի պրօլէտարիատին: Ամբողջ մասը արդիւնաբերութիւնը, արհեստները, շինարարական բանւորների մեծ մասը աւելի քիչ է իւրացնում կօլ-

լեկտիւ տնտեսութեան զաղափարը, քան զիւղացիութիւնը: Սօցիալիստ-լեղափոխականների կարծիքով, սօցիալական այդ խմբակների կոլլեկտիւիստական գաղափառներով կրթւելը պէտք է կատարւի ոչ թէ բացասական ճանապարհով—կապիտալիզմին ծառայելով, այլ զրական ճանապարհով—ամեն տեսակ տնտեսական կօօպերացիաների միջոցով և աշխատաւոր ժողովրդի տեղական և պետական կառավարութեան մէջ ունենալիք լայն մասնակցութեամբ: Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, նորից կրկնում եմ, որ կոլլեկտիւիստական հմտութիւնների լայն զարգացումը հնարաւոր է միայն պետութեան լիակատար գեմօկրատիզացիայով և հողի ու խոշոր ձեռնարկութիւնների հասարակականացնելով: Որ գիւղացիութիւնը, որոշ պայմաններում, կարող է առողրւել կոլլեկտիւիստական զաղափառներով, դրան ապացոյց այսպէս կոչւած «կօմմունիստական» կրօնական ազանւները, որոնք երբեմն երբեմն երևան են զալի գիւղացիութեան մէջ և մերժելով մասնաւոր սեփականութիւնը, փորձում են կազմակերպւել ընդհանուր սեփականութեան հիմքերի վրայ: Ծիշտ է, այդպիսի համայնքների զոյութիւնը երկարատեւ չի լինում և շարունակւում է, քանի դեռ վար է լինում նրանց մէջ կրօնական էնտուզիազմը, բայց և արդիւնաբերական բանւորների կօօպերատիւ արտադրութիւններ կազմակերպելու մասնակի փորձերը նոյնպէս միշտ անյաջողութեան են հանդիպել: զրանք կամ կազմալուծւել են կամ սովորական բուրժուական ակցիօներական ընկերութիւններ դարձել: Սյդպիսի փորձերը, իրենցից ներկայացնելով միայն չնչին, աննկատելի բացառութիւններ, արմատականապէս հակասելով շրջապատող բուրժուական կարգերին, բնականաբար պէտք է մեռնեն: Բայց միանգամայն հնարաւոր է, որ այդ կօօպերացիաները, եթէ համեմատաբար կարճ ժամանակաչ ընթացքում ընդգրկեն

աշխատաւոր ժողովրդի նշանաւոր մասը, այդ դէպքում նրանք աւելի կենսունակ լինեն: Ընդհանրապէս, այս կամ այն աշխատաւոր խմբակների սօցիալիստական հակումները չի կարելի չափել որեէ ձեական նշանով—«վարձու» բանւորների թւին պատկանելով— առանց մանրամասն և ճշգրիտ վերլուծութեան: Ժողովրդի ամբողջ շահագործւող աշխատաւոր մասը—վարձկան թէ ոչ, դա բոլորը մէկ է—որը զբաղւած է օգտակար, արտադրողական աշխատանքով, և որի հաշւով ապրում են հասարակութեան բոլոր մնացած շերտերը, ըստ էութեան, չեն կարող սօցիալիզմի սկզբունքային թշնամի լինել, որը ձգտում է վերացնել մարդկանց շահագործումը: Ինչո՞ւ, օրինակ, Արևմտեան Եւրօպայում համարեա ամեն տեղ աշխատաւոր գիւղացիութիւնը մինչև այժմ չի յարել սօցիալիստական շարժման և մինչև անգամ թշնամաբար է վերաբերւում: Սովորաբար դա վերադրում են գիւղացիութեան տգիտութեան, նրա մէջ դարերի ընթացքում արմատացած ինդիվիդուալիստական սեփականատիրական բնազդներին. այդ բոլորը ճիշտ են բայց իմ կարծիքով, դրանք դեռ բաւական չեն այդ երևոյթի բացատրութեան համար: Իրա պատճառները աւելի խորն են: Ոչ մի սօցիալիստական կուսակցութիւն աշխարհիս վրայ, իբրև վաղւան ծրագիր, չի ընդունում ոչ միայն սօցիալիստական կարգերը, այլ մինչև անգամ անցողական շրջանի կարգերը. այդ կարգերը, նոյն իսկ սօցիալիզմի աչքի ընկնող զեկավարները պատկերացնում են իրենց միայն շատ մութ և անորոշ զձերով: Նեաւոր իդէալի համար, գոհելով ներկայումս վերջին հացի կտորը, իրենց ազատութիւնը և մինչև անգամ կեանքը, կարող են կուել միայն առանձին գաղափարական անհատները, նրանք, որոնք կազմում են սօցիալիստական ինտելիգենցիայ, բառիս այն մտքով, ինչ մտքով, հասկանում էին մեր հռչակաւոր ուսուցիչները—Լավրօվը և

Միխայլովսկին: Ինտելիգենցիայ ասելով նրանք հասկանում էին, ոչ թէ այս կամ այն բարձրագոյն դպրոցի դիպլոմ ունեցող մարդկանց, այլ նրանց, որոնց համար, նրանց հասարակական դրութիւնից և մասնագիտական կրթութիւնից միանգամայն անկախ, ամենի, աւելի բարձր է անհատական և հասարակական զարգացման և հասարակական արտադրութեան շահերը: Սօցիալիստական ինտելիգենցիան փոքրաթիւ է և ինքն ըստ ինքեան անօր. որպէսզի նա ոչ ժ դառնայ, պէտք է ձեռք բերի մասանների համակրութիւնը և աջակցութիւնը: Բայց քանի որ նա սօցիալիզմի իրականացումը վաղւան օրւայ խնդիր չի համարձակւում համարել, ուստի և իր զբօշակի տակ նա կարողացել է հաւաքել միայն արդիւնաբերական բանւորներին, առաջարկելով մօտակայ պահանջների ծրագիր, որոնց ձգտելով, բանւորները անմիջապէս, ներկայումս, կարող են բարելաւել իրենց դրութիւնը: Սօցիալիստական կուսակցութիւնները մինչև վերջին ժամանակներս չեն ձշակել զիւղացիութեան համար այդպիսի մօտակայ ծրագիր: Միանգամայն բնական է, որ քանի դեռ զիւղացիներին առաջարկւում է սպասել մինչև այն հեռւոր ժամենտը, երբ վերջապէս կիրականանայ սօցիալիզմը, պրօլետարիզացիայի ենթարկւել և դառնալ զիւղական բատրակներ կամ զնալ քաղաքները խտացնելու քաղաքային բանւորների շարքերը, մինչև այդ նա չի կարող սօցիալիզմի դրօշակի տակ մանել: Եւ ահա ուստական սօցիալիստ—յեղափոխականները, ինչպէս և արտասահմանեան սօցիալիստների մի մասը, կարծում են, որ առանց սօցիալիզմի սկզբունքներին դաւանանելու հնարւոր է, առաջադրել մի այնպիսի ազրարային ծրագիր, որը աշխատաւոր զիւղացիութեանը կտանի դէպի ազազայ սօցիալիստական կարգերը ոչ թէ բատրակային կեանքի միջով այլ նրանց ներկայ դրութիւնը բարելաւելով, որպէս նոյնպիսի օգոակար և անհրա-

ժեշտ աշխատանքի ներկայացուցիչներին, ինչպէս և արդիւնաբերական բանւորները: Սօցիալիստ—յեղափոխականների կարծիքով, այդպիսի ծրագիր ներկայացնում է հողերի պետականացման մի տեսակը—նրանց սօցիալիզացիան, այսինքն յատարարել բոլոր հողերը համաժողովրդական սեփականութիւն և մտցնել հաւասարիչ հողաշահութիւն (уравнительное землепользование) այն մարդոց համար, որոնք ուզում են իրենց սեփական ոյժերով աշխատել այդ հողերի վրայ: Այդպիսով հասարակութիւնը հնարաւորութիւն կունենա, այն անաշխատ եկամուտը, որը քանի դեռ գոյութիւն ունի ապրանքային փոխանակութիւնը, տալիս է հողը զանազան չափով, նայած նրա տեղադրութեան և որակի, ծախսել ամբողջ հասարակութեան օգտին, հաւաքելով այդ եկամուտը պարբերական վերադնահատութեան ենթարկող, հողային հարկի ձևով, և երկրագործի ձեռքին թողնելով միայն նրա և նրա ընտանիքի աշխատանքի ամբողջ արդիւնքը: Յետագայում, սօցիալիստ—յեղափոխականները յոյս ունեն, որ կօսպերացիայի լայն զարգացումը զիւղացիների մէջ, վերջ ի վերջոյ կ'պետականացնի, զիւղանտեսական արտադրութիւնը և ճիշտ այնպէս, ինչպէս, նոյն այդ պրօցէսը, գուցէ մի փոքր աւելի արագ կերպով, տեղի կունենայ արդիւնաբերութեան մէջ: Զարգացման այդ պրօցէսի ամբողջ ընթացքում մեր աշխատաւոր զիւղացիութեան շահերը երբէք չեն ընդհարւելու արդիւնաբերական բանւորների շահերի հետ: Սրւեմտեան Եւրօպայում հացի մաքսի համար մղւող կռիւր, որը մեծ մասամբ զիւղացիներին զցում է սօցիալիզմի կատարի հակառակորդների—ազրարիանների կողմը, Ռուսաստանում չի կարող տեղի ունենալ: Ռուսաստանը իր հողերի առատութեան և ազգաբնակչութեան համեմատական նոսրութեան շնորհիւ, մանաւանդ զիւղանտեսական տեխնիկայի զարգանալով, դեռ երկար ժամանակ կմնայ ար-

տահանող և ոչ թէ ներմուծող երկիր: Գիւղացիութեան և բանւորների շահերը ոչ թէ միայն միմեանց չեն հակասում, այլ ընդհակառակը միլիտոնաւոր գիւղացիութեան զրուութեան բարելաւուծը մի կողմից կ'թուլացնի աշխատազուրկների հոսանքը դէպի քաղաքները և միւս կողմից, բարձրացնելով արդիւնաբերական ապրանքների պահանջի քանակը, անպայման պէտք է լաւացնի արդիւնաբերական բանւորների զրուութիւնը և անտեսական բազա տայ բանւորական առաջադիմական օրէնսդրութեան ու խոշոր ձեռնարկութեան հասարակականացման համար: Միւլենոյն ժամանակ, չպէտք է մոռանալ, որ Ռուսաստանում կան ահագին քանակութեամբ ընտանիքներ, որոնց մէկ անդամը երկրագործութեամբ է պարապում, միւսը աշխատում է գործարանում: Այդ բոլորը աւելի ևս ամրացնում է գիւղացիութեան և բանւորութեան փոխադարձ կապը: Ահա ընդհանուր և թռուցիկ զօժերով այն դատողութիւնները, որոնք իրաւունք են տալի սօցիալիստ - յեղափոխականներին ասպարէզ զալ իբրև մի սօցիալիստական կուսակցութիւն, որը հենւում է արդիւնաբերական բանւորութեան, աշխատաւոր գիւղացիութեան և սօցիալիստական ինտելիգենցիայի վրայ:

Այն բազմաթիւ միջանկեալ շերտը, որը ապրում է ոչ արտադրողական աշխատանքի վարձով, որը ոչ մի դէպ չի խաղում ոչ արտադրութեան, ոչ ապրանքային փոխադրութեան գործում, կամ որը ապրում է անհատական ծառայութեամբ և զանազան հասարակական պաշտօնավարութեամբ, չի կարող սօցիալիստական կուսակցութեան յենարանը լինել: Այդ շերտը իրեն կազմով այնքան բազմազան է և այնպիսի մի խառնուրդ է ներկայացնում, որ չի կարելի որևէ որոշ բան ասել նրա մասին իբրև ամբողջութեան: Այդ շերտի մէջ մտնող մարդկանց ոչ աշխատավարձի քանակը, ոչ նրանց զբաղմունքի թիւ թէ շատ օգտակարութիւնը ինքն ըստ ինքեան չեն

կարող որոշել նրանց յարաբերութիւնը սօցիալիստական կուսակցութեան հետ: Եթէ այս կամ այն զբաղմունքը, օրինակ, ժողովրդական ուսուցչի, պրօֆէսօրի, բժշկի, պօստ-հեռագրական ծառայողի և այլն իւրաքանչիւր հասարակութեան համար օգտակար և անհրաժեշտ է, այդ դէպքում զրանցով պարապողները այն չափով ինչ չափով բարեխիղճ կերպով են վերաբերւում դէպի իրենց պարտականութիւնները, սկզբունքով ոչ մի հիմք չունեն դէմ լինելու սօցիալիզմին, մանաւանդ այն երկրներում, որտեղ բանւորների նիւթական զրուութիւնը աւելի ու աւելի դէպի լաւն է փոխւում և այդպիսով չքանում է Ֆիզիքական և մտաւոր աշխատանքների վարձատրութեան քանակի տարբերութիւնը: Սօցիալիստական կարգերի իրականացումը այդ կատեգորիայի մարդկանց չի սպառնում նրանց կենսական մակերեւոյթի ոչ լիակատար վերացումով և ոչ էլ զգալի կրճատումով: Բայց հարցը նրանումն է, որ սօցիալիստական կարգերը չեն զալիս ինքն իրեն, նրանց համար հարկաւոր է կուել, ըրիսկի ենթարկել իր ներկայ զրուութիւնը, և այդ ըրիսկը այնքան աւելի մեծ է, որքան աւելի յետամնաց է երկիրը, ևս առաւել Ռուսաստանում: Իրա շնորհիւ այդ դէպքում զխաւոր դէրը պատկանում է մարդու անհատականութեանը, որովհետև նրա զրուութեան անելանութիւնը տարրերապէս չի մղում նրան դէպի կոիւ: Մի բան միայն կարելի է հաստատապէս ասել, որ այն մարդիկ, որոնք մեծ կամ փոքր վարձատրութեամբ, դա միւլենոյնն է, կատարում են պարազիտական, աշխատաւոր ժողովրդի համար անօգուտ և մինչև անդամ վնասակար, ֆունկցիաներ, և միւլենոյն ժամանակ անընդունակ են կամ հակուծն չ'ունեն դէպի օգտակար աշխատանքը, այդպիսի մարդիկ պետք է դէմ լինեն սօցիալիզմին, որովհետև նրանք տեղ չունեն սօցիալիստական հասարակութեան մէջ:

Սօցիալիստ յեղափոխականների դաւանած ընդհանուր

սկզբունքներից այժմ անցնենք նրանց ծրագրին, բառիս անձուկ մտքով: Թէև սօցիալիստ—յեղափոխականները, սօցիալ-դեմոկրատների նման չեն կարծում, որ եթէ մինչև անգամ յաղթական ապստամբութիւնը կուսակցութեան ձեռքը տայ դիկտատուրան հնարաւոր է Ռուսաստանում իրականացնել սօցիալիստական կարգերը, այնուամենայնիւ նրանք համաձայն չեն սօցիալ-դեմոկրատների հետ այն բանում, որ Ռուսաստանի գալիք յեղաշրջումը անխուսափելի կերպով բուրժուական բնաւորութիւն պէտք է կրի և ստեղծէ միայն բորժուական հասարակութեան զարգացման նօրմալ պայմանները: Սօցիալիստ-յեղափոխականները, եթէ իրենց տրամադրութեան տակ ունենան անհրաժեշտ ոյժ, չեն վախի հարւածներ հասցնել կապիտալիզմի հենց հիմքերին: Նրանք իրենց ծրագրում բացի քաղաքական կարգերի լիակատար դեմոկրատիզացիայից, որը հիմնւած պէտք է լինի ազգութիւնների աւտօնօմիայի և լայն տեղական ինքնավարութեան վրայ, մրտացնում են նոյնպէս հողի սօցիալիզացիան: Բարեյաջոյ պայմաններում կուսակցութիւնը կանգ չի առնի հասարակականացման և այլ միջոցների առաջ—ինչպէս են երկաթուղիների և հանքերի պետականացումը, ջրաբաշխութեան, լուսաւորութեան, քաղաքային քարշակների, սպանդանոցների մուկիցիպալիզացան և վերջապէս ամբողջապէս բանւորների գործավարութեան և պետական հսկողութեան յանձնել այն արդիւնաբերական ձեռնարկութիւնները որի մէջ աշխատող բանւորները այդպիսի գործավարութեան պատրաստականութիւն ցոյց կտան: Ի հարկէ, այդ բոլոր միջոցները դեռ ևս չեն վերացնում ապրանքային փոխանակութիւնը և միայն առաջին քայլերն են դէպի սօցիալիզմը: Բայց գուցէ այդպիսի կարգերը նոյն են ինչ որ ներկայ բորժուական կարգերը: Անկասկած ոչ: Հողի և խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնների հասարակականացումը (социализация) կապիտալի իշխանութեանը կհասցնի խիստ, ան-

բուժելի հարւածներ: Ինչպէս էս արդէն ասացի այդ բոլորը այն կոլլեկտիւ կանոնաւոր տնտեսապարութիւնը չէ որին ծագում են սօցիալիստները, բայց ամեն մի կուսակցութիւն կարող է իրականացնել միայն այն բարեփոխութիւնները, որոնք աշխատաւոր ժողովրդի զարգացման կողմից խոչնդօտի չեն հանդիպում և որոշ չենակէտ են գտնում նրա կոլլեկտիւիստական գործունէութեան հմտութիւնների մէջ: Կեանքի մէջ միայն այն ռէֆօրմները կարելի է իրականացնել, որոնց բոլոր դէտայլները մեր հասկացողութեան մէջ կարողանում են որոշ և պարզ կերպով ընդգծել: Իսկ ներկայ մօմենտում մենք չենք կարող պատկերացնել մեզ թէկուզ ընդհանուր գծերով, թէ ինչ հաստատութիւնների կամ կազմակերպութիւնների օգնութեամբ կարելի է վարել այնպիսի հսկայական պետութեան, ինչպէս Ռուսաստանը, կանոնաւոր կոլլեկտիւ տնտեսութիւնը, ումը յանձնել այն ֆունկցիաները, որը այժմ լաւ թէ վատ կատարում են շուկան և ապրանքային փոխանակութիւնը: Եթէ որ կուսակցութիւնը չի ուզում բաւականաչափ զաղափարական պրօպօզանդայով, այլ ցանկանում է թէկուզ մասնակի կէպրով իրականացնել կեանքում իր իդէալը, նա պէտք է առաջանդի այնպիսի պահանջներ, որոնց անմիջական, իրականացման, ի հարկէ վերացնելով բոլոր արտաքին խօչնդօտները, ինքը անպայման հաւատում է: Ի հարկէ չի կարելի հաստատապէս պնդել, որ սօցիալիստ-յեղափոխականներին մօտակայ ապագայում անպայման կչաջողւի իրականացնել վերը առաջ բերած ծրագիրը, սակայն այնուամենայնիւ հէնց այդ ծրագիրը պէտք է լինի կուսակցութեան դրօշակը և կուսակցական պրօպօզանդայի բովանդակութիւնը կազմի, որովհետև նրա իրականացման խօչնդոտները ոչ թէ ներքին են այլ արտաքին: Ծրագրի իրականացման յաջողութիւնը կախւած է կուսակցութեան ոյժից, իսկ ոյժը—ժամանակի խնդիր

է և կրճատել պահանջները կամ ծրագիրը օրէջօր փոփոխող հասարակական կուսակցութեան համաձայն, նշանակուած է ծրագիր չունենալ: Այն մինիմում ծրագիրը, որը եւրօպական սօցիալիստների նման, առաջարկուած են սօցիալիստ-յեղափոխականները, ծրագիր կարելի է անուանել միայն նրա համար, որ ուրիշ աւելի յարմար բառ չկայ. դա աւելի շուտ յիշատակարան ցուցակ է կամ այն զիջումների ցուցակը, որոնք մի կողմից կարող է ընդունել բուրժուական հասարակութիւնը, որոշ ճնշման տակ, և որոնք միւս կողմից անպատրաստ մասանների մէջ ազիտացիայ մղելու յարմար առիթներ են և միւսնոյն ժամանակ ընդունելի մի այնպիսի սօցիալիստական կուսակցութեան համար, որը անգոր է տեսականապէս հնարաւոր մակսիմումը ձեռք բերել: Սօցիալիստ-յեղափոխականների մինիմում ծրագրում այն չափով, ինչ չափով հարցը վերաբերում է արդիւնաբերական բանւորների կարիքների բաւարարութեան նրանք համաձայն են սօցիալ-դեմօկրատների ծրագրի հետ, այսինքն այդ պահանջները հանգում են լայն, պրօգրեսիւ գործարանական օրէնսդրութեան, որպիսին գոյութիւն ունի օր. Նոր-Ջելանդիայում. ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ պաշտպանողական օրէնսդրութիւնը պէտք է ընդգրկի իր մէջ և զիւղական բանւորներին, ինչ չափով այդպիսիներին չի յաջողւի ինքրուրոյն տնտեսութիւն ձեռք բերել, որը և իսկապէս կազմում է սօցիալիստ-յեղափոխականների նպատակը:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ հողի «սօցիալիզացիայի» պահանջը սօցիալիստ-յեղափոխականների ծրագրի ամենաէական կէտն է ուստի աւելորդ չեմ համարում աւելի մանրամասն կանգ առնել այդ հարցի վրայ: Ահա թէ ի՞նչ կերպ է ձևակերպում 1905 թ. կուսակցական ընդհանուր ժողովում ընդունւած ծրագիրը, իր վերաբերմունքը դէ-

պի ազրարային հարցը՝ «հողային յարաբերութիւնների վերակազմութեան հարցում սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը յօդուտ սօցիալիզմի և բուրժուական սեփականատիրական սկզբունքների դէմ մղող կռւելի, ձգտում է հենել ուսական զիւղացիութեան համայնական և աշխատաւորական հայացքների և նրա կեանքի տրագիցիաների և ձևերի վրայ, մանաւանդ նրանց մէջ տարածւած այն համոզմունքի որ հողը ոչ ոքինն է և նրանից օգտւելու իրաւունքը տալիս է իւրաքանչիւրին միայն աշխատանքը: Կուսակցութիւնը, համաձայն իր ընդհանուր հայեացքների յեղափոխութեան խնդիրների վերաբերմամբ զիւղում, կծգտի հողի սօցիալիզացիայի այսինքն, որ հողը հանւի ապրանքային շրջանառութիւնից, անհատական կամ խմբական սեփականութիւնից վերածւի համաժողովրդական սեփականութեան հետեւեալ հիմունքների վրայ՝ բոլոր հողերը անցնում են ժողովրդական ինքնավարութեան կենդրոնական և տեղական օրգանների ձեռքը, սկսած զեմօկրատիկ կազմակերպւած ապագասային (ООЗЪ СОСЛОВ-НИХЪ) զիւղական և քաղաքային համայնքներից մինչև շրջանային և կենդրոնական վարչութիւնները. հողաշահութիւնը պէտք է լինի հաւասարիչ աշխատաւորական, այսինքն պէտք է ապահովել իւրաքանչիւրին, սեփական (անհատական կամ ընկերական) աշխատանքի գործադրութեան հիման վրայ, նրա սպառողական նօրման. ըէնտան, առանձին հարկի միջոցով պէտք է գործադրւի հասարակական կարիքների վրայ. նեղ, տեղական նշանակութիւն չունեցող հողերից և վայրերից (լայնատարած անտառներից, ձրկնորսութիւնից և այլն) օգտւել կանոնաւորում է ինքնավարութեան համապատասխան աւելի լայն օրգաններով. հողի գողը (нѣдра) մնում է պետութեան սեփականութիւն. հողը համաժողովրդական սեփականութիւն է դառնում առանց չեա զեման, կալւածական այդ յեղաշրջումից վնասուածները իրաւունք ունեն

ստանալ միայն հասարակական աշակցութիւն այնքան ժամանակով, որը անհրաժեշտ է անհատական դոյութեան նոր պայմաններին համակերպելու համար»: Առաջ բերած բնագրից պարզ երեւում է, որ «սօցիալիզացիան» հողի պետականացման միայն որոշ տեսակն է և վերաբերում անխտիր բոլոր հողերին, ինչպէս պետական, իրաւական կամ անհատական մարդկանց նոյնպէս և գիւղացիական հողերին: Պետականացւած հողը շահագործելու զանազան միջոցներ կարելի է հնարել. կարելի է օր. առանց հողի քանակը սահմանափակելու կապալով տալ նրանց, որոնք ամենաբարձր կապալագինը կառաջարկեն. կարելի է որոշել հողաբաժնի մակսիմումը և տալ որոշ պայմաններով, նախապէս որոշւած գնով և այլն: Այդպիսով «պետականացումն» տերմինը չափազանց ընդհանուր է և պահանջում է լրացուցիչ պարզաբանութիւններ: Սօցիալիստ-յեղափոխականների ծրագրի համաձայն հողից օգտւելու իրաւունք ունի հասարակութեան իւրաքանչիւր անդամը, որը մտադիր է գործադրել իր սեփական—անհատապէս կամ բնկերակցութեամբ—աշխատանքը, այն քանակութեամբ, որը ապահովում է նրա պահանջների բաւարարութիւնը և չի գերազանցում նրա բանւորական ուժը: Որտեղ գոյութիւն ունի համայնական հողատիրութիւն նա պահպանւում է, սակայն, ինքն ըստ ինքեան հասկանալի է որ նա ոչ մի տեղ բռնի կերպով չի մտցնւում: Ժողովրդական դեմօկրատիկ ներկայացուցչութիւնը որոշում է հողից օգտւելու ընդհանուր սկզբունքները, ինքնավար հողային շրջանների սահմանները, մշակում է այն հիմնական սկզբունքները, որոնցով պէտք է կատարւի գաղթը և տեղափոխութիւնը մէկ շրջանից միւսը, իսկ փաստօրէն այդ բոլոր սկզբունքների գործադրութիւնը զսնւում է ժողովրդական ինքնավարութեան օրգանների ձեռքում սկսած դեմօկրատիկ կերպով կազմակերպւած ապադասային գիւղական և քաղաքային հա-

մայնքներից մինչև շրջանային և կենդրոնական վարչութիւնները: Պետականացրած հողերով օգտւելու այդպիսի ձևերն են հասկանում սօցիալիստ յեղափոխականները «սօցիալիզացիա» բառի տակ: Բացի դրանից ծրագրի IV կէտում ասւած է, որ կուսակցութիւնը գիւղատնտեսութեան մէջ կապալտպանէ ամեն տեսակ հասարակական ձեռնարկութիւններ ինչպէս են դեմստփօին-հողագործական կազմակերպութիւնները, դեմստփօյին և շրջանային ինքնավարութեան օրգանների, պետութեան աշակցութեամբ, կազմակերպւած լայն փոխարինութիւնը, որ պէտք է աշակցի զխաւորապէս կօօպերատիւ հիմունքների վրայ զբաւած աշխատւորական տնտեսութեան զարգացման: Վերոյիշեալից պարզ երևում է թէ որքան արդարացի են սօցիալ-դեմօկրատների այն մեղադրանքները թէ սօցիալիստ-յեղափոխականների իդէալը հողերի բաժանումն է: Մասլօվը օր. ասում է «Կալւածատիրական հողերի բաժանումը (հաւասարիչ հողաշահութիւն)—ահա սօցիալիստ-յեղափոխականների ծրագրի զխաւոր և հիմնական կէտը»...: «Իսկապէս էլ անարդար անհաւասարութեան փոխարէն (թէև հէնց այդ անհաւասարութիւնն են զբժում նարօզնիկները) բոլոր գիւղացիները կունենան հաւասար քանակութեամբ հող, որքան արդարացի և բարոյական կլինի, որպիսի հեշտութեամբ և արագ կիրականանայ արդարութիւնը և ճշմարտութիւնը և որքան դա... մէլլանական կարճատեսութիւնն է՞ Առաջին հայեացքից շատերին կարող է թւալ, որ այդ սօցիալիզմը այնքան էլ վատ չէ ինչպէս թւում է, որ մտածում են բաժանել ոչ թէ չաւիտեանս, ընդ միշտ, այլ պարբերաբար, որ հողի սեփականութեան իրաւունքը մնում է համայնքին (սօցիալիզացիա) կամ պետութեան (պետականացումը): Այնու ամենայնիւ յժւար չէ նկատել, որ այդ բոլոր նկատույթիւնները բոլորովին չեն փոխում իրերի դրութիւնը: Բաժանումը, ինչպէս ուզում էք

անւանեցէք, ինչ բառերով («սօցիալիզացիա», «պետականացումը») ուղում էք վարագորեցէք, դարձեալ մնում է բաժանումն»։ Սօցիալ-դեմօկրատները, սօցիալիստ-յեղափոխականների ազդարային ծրագրի քննադատութեան ժամանակ իրեր են խառնում ամեն տեսակի մեղադրանքներ. մեղադրում են թէ ուտօպիականութեան, թէ ընկերայինութեան և թէ ամենատարրական տնտեսական ճշմարտութիւնների զանցառութեան մէջ։ Սկսենք ընկերայինութիւնից։ Ինչքը կեանքը Ռուսաստանի առաջ գրել է նրա պետական կազմի դեմօկրատիզացիան և աշխատաւոր դասակարգի նիւթական դրութեան լուրջ բարելաւումը։ Ներկայ մօմենտում բոլոր, քիչ թէ շատ առաջադիմական հասարակական հոսանքները ընդունում են, որ գիւղացիների դրութեան բարելաւումը անհնարին է առանց նրանց հողաշահութեան լայնացման։ Նրանց տրամադրութեան տակ գտնւած հողերի քանակը, ինչ վերաբերմունք էլ որ ցոյց չտան սօցիալիստական կուսակցութիւնները, պետք է անպայման մեծանայ։ Այդ մեծացման կամ աւելացման ո՞րպիսի ձևն է աւելի համապատասխանում սօցիալիզմի սկրգբունքներին՝ բոլոր հողերը գիւղացիներին, իբրև մասնաւոր սեփականութիւն, բաժանելը, թէ՛ «սօցիալիզացիան» համաժողովրդական սեփականութիւն յայտարարելը, թէկուզ այդպիսով փաստօրէն աւելի ևս մեծանայ գիւղացիների ձեռքում գտնւած հողաբաժնի քանակը և ամրանայ մանր գիւղացիական տնտեսութիւնը, բայց ոչ երբէք մանր սեփականութիւնը։ Երբորդ տեսակի լուծումն չի կարող լինել, և միայն Մասլօյն է երևակայում թէ գտել է այդ երբորդ տեսակի լուծումը։

Սօցիալիստ-յեղափոխականները մանր տնտեսութեան կողմնակից չլինելով հանդերձ, պահանջում են «սօցիալիզացիա» նրա համար, որ նրանք չեն ուղում իրենց ձեռքով ստեղծել

սօցիալիզմի լուրջ խոչնդոտներ յանձին մանր, ունևոր սեփականատէրերի ընկերային դասակարգի։ Մանր կապալառուն ևս սօցիալիստ-յեղափոխականների իդէալը չէ. նրանց իդէալը — խոշոր կօօպերատիւ տնտեսութիւնն է, որը համերաշխութեան կապերով պէտք է կապւած լինի ամբողջ երկրի նոյնատեսակ տնտեսութիւնների հետ. բայց եթէ կեանքը ստիպում է ընտրութիւն անել մանր սեփականատիրոջ և մանր ազգային հողից օգտւողի մէջ, ի հարկէ վերջինը աւելի լաւ է։ «Նասարակական սեփականութիւնը, թէկուզ համեմատաբար փոքր կօլլեկտիւիզմի շրջաններում, աւելի շուտ աշխատաւորների համերաշխութեան քան «սեփականութեան ֆանատիզմի» զարգացման ասպարէզ է ներկայացնում։ Մինչև անգամ ժամանակակից, բիւրօկրատիզմի լծի տակ հեծող, համայնքի հաւասարիչ վերաբաժանումները, աւելի են նպաստում հասարակական ունակութիւնների զարգացման, քան մանր սեփականատէրերի անսահմանափակ անհատական քմահանձօքի տիրապետութիւնը։ Յամենայն դէպս սօցիալիզմի գաղափարին աւելի հեշտ է անցնել հողերի համայնական սեփականութեան գաղափարից, քան այն դէպքում, երբ իւրաքանչիւրը իր մի կտոր հողի լիակատար տէրն է համարում և ուրիշ ոչինչ չի ուղում լսել։ Ուրիշ խօսքով, հասարակական սեփականութեան թէկուզ անկատար ձևերը, մանր անհատական սեփականութեան ընկերային հետ համեմատած, աւելի քիչ խոչնդողարող են հանդիսանալ սօցիալիզմի գաղափարի ներմուծման և տարածման համար» *)։

Ինչո՞ւմ է կաշնում, Մասլօյի կարծիքով, «սօցիալիզացիայի» ընկերայինութիւնը։ Նախ և առաջ նրանում, որ եթէ նա իրականանայ, ազգաբնակչութեան մի ամբողջ մասս,

*) P. P. Социализация земли, стр. 26—27.

անտեսապէս կախումն պէտք է ստանայ պետական իշխանութիւնից, որով և կուժեղանայ վերջինս. երկորդ, նա խոչնդոտ կհանգիստանայ խոշոր տեխնիկական-րացիօնալ տնտեսութիւնների առաջ գալուն, և երրորդ—ամբողջ զիւղացիութեանը, նրանց սեփականութեան զարգացման յոյս ներշնչելով այդպիսով մոլորութեան մէջ կզցեն նրա որոշ մասը, որովհետև, իսկապէս, անմալ և անինժեշտար զիւղացիները, հողի սօցիալիզացիայից ոչինչ չեն շահւի: Վերջին հարցի վրայ կանգ առնելով, Մասլովը ասում է «Գտնւած է արդեօք այն գաղտնիքը, որի միջոցով թէ սեփականագուրկ և թէ որոշ կապիտալ ունեցող զիւղացիները «հաւասարապէս» կարողանան օգտուել հողից, և այդ ուղղութեամբ սօցիալ-նարօդնիկները ի՞նչ միջոցներ են ձեռք առել, ապահովելու «հաւասարիչ հողաշահութիւնը»: Գիւղատնտեսական տեխնիկայի աստիճանական զարգացմամբ, որը պէտք է պահանջի աւելի ու աւելի մեծ ծախքեր, ի՞նչպէս պէտք է կարողանան «հաւասարապէս» օգտուել հողից պրօլէտարները և ի՞նչ հետեւանքների կ'հասցնի նրանց այդպիսի հողաշահութիւնը...»: «Արդեօք ամբողջ զիւղացիութիւնը կընի փափուկ անկողնում և կուտէ ցորենի զաթաներ, ինչպէս յուսադրում էր 70-ական թւականների մի զբքօչկը, թէ պրօլէտարներին այլ վիճակ է սպասում: Ի՞նչպէս կազդի ազրարային բէֆօրման կապիտալիզմի զարգացման վրայ ինդուոտրիայում: Սօցիալիստ-նարօդնիկները ստիպւած կլինեն պատասխանել վերօչիշեալ հարցերին և վախում եմ, որ նրանք դժարանան պատասխանել»:

Առաջին հարցին սօցիալիստ-յեղափոխականները կարող են պատասխանել, որ հողի սօցիալիզացիան կարող է իրականանալ միայն դեմօկրատիկ պետական կարգերում և լայն տեղական և շրջանային ինքնավարութեան մէջ, հետևապէս, վստիսել, որ այդպիսով կուժեղանայ պետական իշխանութիւնը և

բիւրօկրատիայի խնամակալութիւնը, միանգամայն անտեղի է: Միւսնոյն ժամանակ, իմ կարծիքով, չի կարելի կասկածել, թէ որոնք կլինեն դեմօկրատիայի յուսատու հենարանները—անչտուած, կղզիացած միլիօնաւոր մանր սեփականատէրերը, որոնց շահերը սեփական հողի սահմաններից այն կողմը չեն դնում, թէ պետական հողից օգտուողները, որոնք, մեծ մասամբ, կապւած կլինեն ընդհանուր շահերով և որոնք տեղական և շրջանային դեմօկրատիկ կազմակերպութիւնների մէջ մշտապէս զբաղւած կլինեն հողաշահութեան կանոնաորման ընթացիկ հարցերով: Ինչ վերաբերում է տեխնիկական—րացիօնալ զիւղատնտեսական զարգացման, այն չափով, ինչ չափով հարցը անհատական տնտեսութեան է վերաբերում, իսկապէս, որոշ սահման է դրւում. աւելի հարուստ զիւղայիները իրենց հողաշահութեան մէջ սահմանափակւած լինելով իրենց բանւորական ոչժերի քանակով, հնարաւորութիւն չունենալով զնել կամ կապալով վերցնել աւելի մեծ քանակութեամբ հող, չեն կարողանայ մտցնել խոշոր տեխնիկական-րացիօնալ տնտեսութիւն: Սակայն եթէ այդպիսի տնտեսութիւնը անհնար է առանձին զիւղացիների համար, դա հնարաւոր է դառնում զիւղացիական ընկերութիւնների համար: Եթէ Կառուցկին, ինչպէս տեսանք վերը, իր յոյսը դնում է նրա վրայ, որ վերջ ի վերջոյ զիւղացի-սեփականատէրերը կմիացնեն իրենց հողերը և կսկսեն միացեալ ոչժերով մշակել, մանաւանդ, երբ կտեսնեն այդպիսի տնտեսավարութեան շահաւէտութիւնը, ինչո՞ւ սօցիալիստ-յեղափոխականները չեն կարող յուսալ, որ մանր կապալառուները ևս այդ կերպ կվարեն: Բացի դրանից, տեղական և շրջանային կազմակերպութիւնները պարտաւոր կլինեն հողագործական դպրոցներ բանալ, մտցնել փորձնական դաշտեր, և օրինակելի ֆերմաներ և կազմակերպել զիւղատնտեսական փոխառութեան գործը,

մասնաւորապէս գիւղատնտեսական ընկերութիւններին: Կարելի է յուսալ, որ այդպիսի պայմաններում, գիւղատնտեսական զարգացումը աւելի արագ և ուղիղ գծով առաջ կերթայ, քան այժմ, երբ հասարակութիւնը, իր, գիւղատնտեսութեան առաջադիմութեամբ, պարտաւոր է բացառապէս հարուստ հողատիրոջ մասնաւոր նախաձեռնութեան: Վերջապէս պատասխանենք և այն հարցին, թէ հողի սօցիալիզացիան ի՞նչ կարող է տալ գիւղացի կիսապրօլետարիին կամ գիւղական բանւորին: Սօցիալիստ-չեղափոխականները, հակառակ պ. պ. Մասլօվի և Նազարովի, ոչ մի բոպէ այն իլլիզիւզիայի մէջ չէին ընկնում, որ հողի սօցիալիզացիան սօցիալական հարցի վերջնական լուծումն է և պէտք է ապահովի հասարակութեան իւրաքանչիւր անդամին նրա լիակատար նիւթական հաւասարութիւնը միւսների հետ: Բայց և այնպէս, նրանց խոր համոզմամբ, հողի սօցիալիզացիան քիչ բան չի տալ նաև պիւղացիութեան աղքատ շերտերին ևս: Եթէ մինչև անգամ այժմ պետութիւնը և ղեկավարչին ինքնավարութեան օրգանները անբերրութեան և ազարի դէպքերում իրենց պարտականութիւնն են համարում օդնութեան հասնել գիւղացիութեան, ապա ինչո՞ւ դեմօկրատիկ պետութիւնը և ինքնավարութեան դեմօկրատիկ օրգանները չեն կարող իրենց նպատակ դնել—անհրաժեշտ ինվենտարներ տալ գիւղական աղքատակութեան չ'ունեւոր մասին: Եթէ վերջիններին մինչև անգամ չչաջողւի քնել փափուկ անկողնում և ուտել ցորենի զաթաներ, յամենայն դէպս սովամահ չեն լինի: Վերջապէս այդ գիւղացիութեան մի մասը կարող է աշխատել հասարակական փորձնական դաշտերում և օրինակելի ֆերմաներում, միւս մասը զբաղմունք կգտնի քաղաքներում, որովհետև անկասկած ինդուստրիան կզարգանայ և կպահանջի աւելի մեծ քանակութեամբ բանւորական ուժեր: Այդ

պատճառով, ազրարային ծրագրի հետ միասին, սօցիալիստ-չեղափոխականներին անհրաժեշտ է նաև բանւորական ծրագիր, հակառակ Մասլօվի կարծիքին, թէ վերջինս սօցիալիստ-չեղափոխականների կողմից — «խոր թիւրիմացութեան արդիւնք է»: Ինդուստրիայի այդ զարգացումը արդեօք կ'կատարւի կապիտալիստական թէ կոլլեկտիւիստական հիմունքների վրայ—զա կախած կլինի մեծ մասամբ, սօցիալիստական կուսակցութիւնների մտքի պարզութեան և ըէֆօրմատօրական ծրագրների վճռողականութիւնից, նրանց եռանդից և ուժից: Հողի սօցիալիզացիան միայն առաջին քայլն է դէպի սօցիալիզմը, և նրա հետեւանքների արժէքը ճշտութեամբ հասկանալու համար պէտք է համեմատել ոչ թէ մեր հեռավոր իդէալների հետ, այլ այն հետեւանքների հետ, որը կբերի, սօցիալիզացիայից հրաժարւելու դէպքում, անխուսափելի հողերի բաժանումը իբրև մասնաւոր սեփականութիւն:

Անցնենք այժմ հողի սօցիալիզացիայի ուսույնականութեան: «Հողի պետականացումն, ասում է Մասլօվը, որպէս հարցի լուծման մի միջոց, ներկայումս Ռուսաստանում չի կարելի ընդունել նախ և առաջ նրա համար, որ նա ուսույնական է: Հողի պետականացումը նշանակում է բոլոր հողերը շանձնել պետութեան ձեռքը: Բայց մի՞թէ գիւղացիները, մանաւանդ սեփականատէր գիւղացիները, կհամաձայնեն բարի կամքով իրենց հողերը ուրիշին տալ: Եթէ Արևմտեան Եւրօպայում, ազատ ազիտացիայով անգամ տասնեակ տարիների ընթացքում հազիւ է չաջողում գիւղացիական ղլխներում կոլլեկտիւիստական գաղափարներ մտցնել, ապա ո՞րտեղից ազատ կամ համայնական գիւղացին կարող է հասկանալ հողի պետականացման օգտակարութիւնը: Բայց եթէ մինչև անգամ հնարաւոր լինի բացատրել սուր միջոցի օգտակարութիւնը, այնուամենայնիւ Ռուսաստանում զանազան

շրջանների ժողովրդները երբէք չեն կարող համաձայնել իրենց հողերը պետութեանը յանձնել: Իսկպէս էլ միթէ լեհացիք, մօլորօսները, կովկասեան լեռնականները կուզեն որ իրենց հողերը գտնեն Պետերբուրգի արամադրութեան տակ: Միթէ որեւէ մէկը կարող է երաշխաւորել, որ այդ հողի վրայ ազգային հարցը հսկայական չափեր չի ընդունի»:

Ինչ վերաբերում է աւանձին ազգութիւնների ընդդիմադրութեան հողի պետականացման գործում, նախ և առաջ սօցիալիստ-լեղափոխականների ծրագիրը երբէք չի պահանջում շրջանային հողերը դնել Պետերբուրգի արամադրութեան տակ. նրանք պէտք է գտնեն շրջանային դեմօկրատիկ ինքնավարութիւնների օրգանների ձեռքին. երկրորդ—եթէ մի քանի ծայրագաւառների ազգութիւնները շցանկական մրտցնել պետականացումն, որքան էլ դա ցաւալի չլինի սօցիալիստ-լեղափոխականների տեսակէտից, այնուամենայնիւ պետականացումը կարելի է մտցնել այն տեղերում, որտեղ զիւղացիութիւնը համակրւում է այդ միջոցը: Ի հարկէ, եթէ ընդհանրապէս, զիւղացիութեան մեծամասնութիւնը, դէմ լինի պետականացման, դա ոչ մի կերպ չի լինի իրականացնել: Սօցիալիստ-լեղափոխականները հէնց ձգտում են նրան, որ դբաւեն զիւղացիական մասների համակրանքը դէպի իրենց ծրագիրը: Եթէ մինչև անգամ նրանց բոլոր ճիգերը ի դերև ելնեն և պարտութիւն կրեն, որի համար, ի հարկ է, սօցիալ-դեմօկրատները ոչ մի շանք չեն խնայում,—ինչ արած—յամենայն դէպս նրանց, հողի մասնաւոր սեփականութեան վերացման անհրաժեշտութեան համար մղած պրօպօզանդան անհետ չի կորչի: Ինքը Մասլօվը իր ընդիմախօսին ուղղւած պատասխանում ասում է «Ընկեր Նազարովը հաւատացած չէ, որ հողի մուկիցիպալիզացիան կիրականանայ, աչքի առաջ ունենալով զիւղացիական շարժման մեղանական

բնութիւն: Բուրժուական դեմօկրատների կիսատ պռատ լօզունդները նոյնպէս պայմանաւորուած էին նրանով, որ «նրանք չէին հաւատացած ազատազրական շարժման յաջողութեան» մէջ: Բացի դրանից, մինչև անգամ եթէ բացակայում է այդ հաւատքը կարող է արդեօք սօցիալ-դեմօկրատները զիւղացիները վերաբերմամբ դառնալ մեղանին, որովհետև այդ շարժումը մեղանական է, թէ՞ նա միշտ պետք է իրեն հաւատարիմ մնայ: Այդպիսով, եթէ մինչև անգամ թոյլ տանք, որ զիւղացիական շարժման մէջ գերակշռում է հողերի բաժանման տենդենցիան, սօցիալ-դեմօկրատը, չի կարող առաջարկել դեմադօզիական մեղանական լօզունգներ, որպէսզի միմիայն համակերպւի զիւղացիութեան խաւար մասսային»:

Քննելով սօցիալիստ-լեղափոխականների և սօցիալ-դեմօկրատների ծրագրները, մենք տեսնում ենք, որ նրանք էապէս տարբերում են միմիանցից, թէ Ռուսաստանի զալիք լեղաշրջման և թէ ազրարային հարցի վերաբերմամբ: Արդեօք այդ երկու սօցիալիստական ուղղութիւններից որն է աւելի հաւատարիմ մնում սօցիալիստական սկզբունքներին և աւելի հեռատես է, սօցիալ-դեմօկրատները, որոնց մօտակայ նպատակն է բուրժուական հասարակութեան զարգացման նօրմալ պայմանները և հողի մասնաւոր սեփականութեան ամրացումը թէ՞ այդպիսի սեփականութեան հակառակորդ սօցիալիստ լեղափոխականները, որոնք յօդուտ աշխատաւոր զիւղացիութեան պահանջում են հողի սօցիալիզացիան և պատրաստ են ուրիշ հարւածներ ևս հասցնել կապիտալիզմին: Դա ապագան ցոյց կտայ: Յամենայն դէպս ինձ թւում է ես բաւական պարզ ցոյց տւի, որ սօցիալ-դեմօկրատների—իրենց զիտնականութեան-փառաբանութիւնը, սօցիալիստ-լեղափոխականների «մանր-բուրժուաներ» ածական շարտելը, ոչ մի արգարացումն չունեն և հազիւ թէ այդ միջոցները կարողա-

նան բարձրացնել իւրաքանչիւր մտածող և լուրջ մարդու աչքում, սօցիալ-դեմօկրատների պրէստիժը:

Ի վերջոյ մի խօսք ևս: Սօցիալիստ-լեղափոխականների ծրագրի իրականացումը, ինչպէս վերը ասացի, դեռ ևս սօցիալիզմ չէ, այնուամենայնիւ այդ միջոցը խոշոր չափով բարելաւում է աշխատաւոր մասաների դրութիւնը և հաստատ հիմք է ձգում սօցիալիստական կարգերի աստիճանական իրականացման համար: Եւ անա մի քանի դիւրագրգիռ էնտուզիաստներ, որոնք հնարաւոր են համարում ներկայումս սօցիալիզմի իրականացումը, անբաւական են սօցիալիստ-լեփոխականների ծրագրից: Այդ անբաւական տարրերը երկիւղ են կրում որ աշխատաւոր մասաները, բաւականաչափ բարելաւելով իրենց դրութիւնը, կկորցնեն յեղափոխական ոգին, կբաւականանան ձեռք բերածով, և այլ ևս հեռուն չեն գնայ: Եթէ ընդունել, որ հիմնաւոր է այդպիսի երկիւղը, նշանակում է, ընդունել, ընդհանրապէս սօցիալիստական կարգերի իրականացման անհնարինութիւնը, որովհետեւ մէկ կողմից, աչքի առաջ ունենալով ժողովրդի անկուլտուրականութիւնը և այն, որ նա դեռ չունի կոլլեկտիւ գործունէութեան փորձառութիւն հազիւ թէ մի որեւէ յեղափոխական ակտով, կարելի լինի իրականացնել սօցիալիզմը, միւս կողմից մասաների անհրաժեշտ կուլտուրական զարգացումը հնարաւոր է միայն նրանց նիւթական դրութեան բարելաւելով, իսկ այդ բարելաւումը միշտ անխուսափելի կերպով թուլացնում է յեղափոխական ոգին: Սօցիալիստ-լեղափոխականները կարծում են, որ սօցիալիզմի դրութիւնը այնքան էլ անյուսալի չէ: Ի հարկ է Ռուսաստանի բանւոր ժողովրդի դրութիւնը համեմատած Անդրիայի և Գերմանիայի հետ, այնքան ծանր և անտանելի է, որ նա ամենից շուտ կգոհի իր կեանքը և կզիմի ամենակատարի միջոցների. շատ հաւանական է, որ նրա դրութեան

բարելաւումը թուլացնի նրա յեղափոխական եռանդը: Բայց չէ՞ որ եթէ իրականանայ սօցիալիստ-լեղափոխականների ծրագիրը, վերանայ հողի և խոշոր արդիւնաբերական ձեռնարկութիւնների մասնաւոր սեփականութիւնը, այն ժամանակ յետագայ զարգացման համար հարկաւոր էլ չեն այդպիսի հետոսական միջոցները: Այդ զարգացման համար անհրաժեշտ կլինի միայն աշխատաւոր մասաների ստեղծագործական գործունէութիւն, որը չի պահանջում այնպիսի անձնագոհութիւն, որպիսին անհրաժեշտ է հին կարգերի բռնի տապալման համար: Եւ ոչ մի հիմք չկայ կարծելու, որ եթէ մարդիկ կուշալինեն նրանց մէջ պէտք է մեռնի ձգտումը դէպի լաւագոյնը: Իսկական վտանգը ներկայացնում է ոչ թէ սօցիալիստ յեղափոխականների ծրագիրը այլ ռուսական սօցիալ-դեմօկրատիայի ձգտումը, նախապէս սահմանափակել իր պահանջները այն գիշումներով, որ կարող է անել բուրժուական հասարակութիւնը: Վերին աստիճանի ցաւալի կլինէր, եթէ հանգամանքների այն բարեյաջող դասաւորումը, որը ներկայումս Ռուսաստանի ամբողջ աշխատաւոր մասաներին միանգամայն լարած դրութեան մէջ է դրել, այդ բարեյաջող պայմանները շահագործելի ոչ թէ տեսականապէս հնարաւոր մաքսիմումին այլ մինիմումին հասնելու համար: Նոյնպիսի ցաւալի հետեանքների կհասնենք, եթէ կօնկրէս պահանջներին փոխարինի «լիակատար սօցիալիզմի» մթազին քարոզը, որի իրականացման միջոցների և ձեերի մասին իրենք քարոզիչները նոյնքան ազօտ հասկացողութիւն ունեն, որքան և այն մասաները, որոնց դիմում են նրանք: Բաւական չէ միայն ցանկալ երկնային թագաւորութիւնը երկրիս վրայ, հարկաւոր է զիտակցել նաև թէ ինչպէս զրան հասնել:



24

9004

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

[Faint, illegible text or markings at the bottom of the page.]

«Ազգային գրադարան»



NL0196315

